



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1999

Գ. Բ.

Դ Յօրու Շահել Ե Աքակի կայ
Բայ անուն բան

1888 թ. Հունվարի 20 Տ. Տ. Հ. Հ. Հ.
11 59 ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՐՔԱՑՈՒԹԵԱՆ



ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

ԵՐԿՆԻՑ

ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԲՈՏ ԴԱՍԵՐ

823

ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԵԱՆ ՀԱՅՐԵԱՆ
Ի ԱՅՍՈՒ ԱՅՍՈՒ
ՀՈԳԵԿՈՐ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈ ՈՐԴԻՈՑ
ԵԿ ԴՊՈՅԻ ՄԱՆԿԱՆՑ

—♦♦♦♦—

Կ. ՊՈԼԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

1887

ՅԻՇԱՑԱԿ ՅԱՒԵՐԺԱԿԱՆ

ԿՈՅՍ ԴԱՏԵՐ ԻԻՐ ԱՐՄԻՆԵ

ԿԱՆԳՆՔ ԶԱՅՍ ՄԱՀԱՐՁԱՆ

ՄԱՐԳԱՐՏԱՇԱՐ

ԳԵՂՈՐԳ ԼՖԻՆՏԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՀՈԴԱԼՈՎ ԶՊԵՏՈ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԻՍ

ԱՐԲԱՅՈՒԹԵԱՆ



4837 - 60

28 40

ԱՌ

ՄԵԾ ԳԷՈՐԳ ԷՖԷՆՏԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Մտերիմ բարեկամ .

Ծննդական սրտիդ բնական սէրն ու գորով
քէլաղրեց ոզիդ , որ վաղամենակի եօրնամեայ Ար-
մինէ դատրիկիդ անուան լիշատակին Մարգա-
րիտէ հիւսուած պսակ մի նուիրես եւ անման
պանես նորա լիշատակ որ քաղցր ի բան ի Տէր
ննջեր է : Դեռ . կը մորմորիս դու իբրեւ հայր կը
մորմորի նաեւ քան զրեզ աւելի երկունքը կրող
ծննդագուք մայրիկն զի տարաժամ մեռաւ փոր-
րիկ Արմենունին , որ ծաղկած մի նոր շուշան
էր Զարդարեան Բուրաստանին մէջ : Ո՞հ , յան-
կարծ փչեց խորշակ ու խամրեց . որ չբացուած
վարդի կոկոն էր , զարկաւ մահուան դայուակ ու
քօրափեց գերեզմանին ծոց . առանց լսելոյ զար-
նան սփսակին երզը , առանց հասնելոյ այն ու-
րախ օրին՝ հարսնութեան քոյին ու պսակին :

Սյ դուք միսիրարուեցէր վշտակիր ծնայր ,
երբ զաւակ ձեր սիրասուն Արմենիկ ի մահուն
կ'արժանանայ աստ Մարգարիտէ պսակին որ ա-
նեղծ եւ անբառամ է . իսկ երկնից մէջ նորա
պսակ յուսեղէն է . զի անմեղութեամբ զնաց աշ-
խարհէս :

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՆԱԽԱՇԱՒԻՒՂ

Ո՞րն է այն մատեան , որ առաւել մար-
դոյ սրտի հետ կը խօսի քան թէ մտաց .
ո՞վ է այն մատենին արագագիր դպիր , ո-
րուն լեզուէն ու շրմունքներէն չնորհք և
սէր կը բջիմի , իւր խօսքեր բոլոր աշխարհ
կը զրաւէ , և մարդոյ հոգին վարելով 'ի գե-
րագոյն սէր՝ երկրս երկինք կը հանէ : Ինչ
է այն մեղմախօս բարբառ , որ Հրէաս-
տանի խորէն տիեզերաց չորս կողմ հասաւ .
ի՞նչ զօրաւոր լեզու էր այն , որ ընտրեալ
յիմարներուն բերնով՝ աշխարհիս իմաստնոց
միտքեր յաղթահարեց ու նուաճեց : Աւե-
տարանն է այս , յաւիտենական կենաց բան ,
զոր Յիսուս քարոզեց , կտակ թողուց աշ-
խարհի ու գնաց . Սուրբ Հոգին յիշեցուց ,
Աւետարանիները գրեցին :

Աւետարան Յիսուսի շունչն է , որով չէ
թէ միայն Բարիլօնի դաշտի մէջ ցրուած
Հրէական ազգին չորցած ոսկորներ կեն-

դանացոյց , այլ համատարած աշխարհիս
երես տիռուած՝ կենդանւոյն մեռած ընդ-
հանուր մարդկութեան հոգիներն ՚ի նոր
կեանս վերանորոգեց :

Ինչ որ Աւետարան գործեց , կարող չե-
ղան գործել հին և արդի աշխարհին մէջ ,
ոչ իշխանութեանց ղէնք , ոչ իմաստասի-
րաց գիւտք : Աւետարանին փառք բարձ-
րացաւ , տիրեց աշխարհիս վրայ քանի մի
տկար ձկնորսներու ձեռքով . Աւետարանին
փառաւոր գահ Բեթլեհէմի մասուր և աղ-
քատներու խրճիթներ եղան :

Զիկայ ընաւ գիրք մի կամ մարդկային
հանճար և իմաստութիւն , որ կարողանայ
մարդոց ստահակ հոգին ուղղել , դաստիա-
րակել և բարուքել , միշտ ՚ի շարն արձա-
նացած՝ ՚ի բարին վերածել , բայց միայն՝
Աւետարանն : Այս փոքրիկ մատեան աշ-
խարհ կարդաց ու հասկցաւ . այս մանրիկ
մանանեխի սերմէն ծառ մի բուսաւ , որուն
ապաստանարար ճիւղերուն վրայ աշխար-

հիս վաստակեալ մարդիկ թռչունի պէս
նստան և հանդիսատ առին :

Թիսուս իւր Աւետարանին պատուական
մարդարիտ՝ Հրէաստանի հրապարակին մէջ
՚ի վաճառ հանեց . աղքատն և հարուստն
վազեցին ՚ի գնել . մարդարտի տէր ձրի կը
բաշխէր , ոչինչ չէր պահանջեր , այլ մի-
այն հաւատք . ո՛վ որ կը հաւատար , նա
միայն կ'ստանար մարդարիտն :

Աւետարանին մարդարիտ յիմարներու
սրտին մէջ հաւատք է , իմաստնոց մտքին
մէջ անհերքելի ճշմարտութիւն . մէկն ա-
ռանց քննելոյ կը հաւատայ , միւսն Տէ-
քարթի պէս քննել ուղելով՝ կ'ափշի և կը
սքանչանայ :

Աւետարանին կերակուր անմահարար է .
կաթէն աւելի սնուցիչ , մեղքէն աւելի
քաղցր է . Դաւիթ ճաշակեց զայն հոգւով
և անուշութենէն զմայելով կ'ասէր և Որ-
պէս զի քաղցր են ՚ի քիմա իմ բանք քո ,
քան զմեղը բերանոյ իմոյ :

Այս ամենահամ սիրոյ ճաշակ Յիսուս երկինքէն բերաւ, Գողգոթայի խաչի փեթակին մէջ նորաճաշակ մանանայ մի կազմեց. Աւետարանին Սուրբ օրէնքներն կարմիր արիւնով դրոշմեց, զոր չի կարացին եղծել և ոչ նշանախեց մի՝ աշխարհիս բռնաւորութեանց ձեռք: Ի՞նչ կարողացան շինել Պղատոն, Սրիստուէլ, Սոկրատ իրենց իմաստասիրութեան փեթակին մէջ: Յիսուս միայն շինեց կրօնի Սուրբ մեղր. որով քաղցրացաւ հանուր մարդկութեան բերան, որ դառնացած էր Ադամայ ճաշակած պաղով:

Աւետարան՝ Աստուածորդւոյն երեսաց արտափայլող լոյսն է. Եկեղեցին մուժ է, եթէ սորա լուսով չի լուսաւորի. Եկեղեցին կը խոտորի, եթէ սորա լոյս չառաջնորդէ. Եկեղեցին հաստատ չէ, եթէ սորա Սուրբ քարերով չհիմնուի:

Մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ երանելի նախնիք որչա՞փ երկիւղածութեամբ՝

պաշտեր են Աւետարանը. յորոց ոմանք մեկնութեանց պարապելով՝ Աւետարանին գիտութիւն ժողովրդոց ընտելացուցեր են. Եթէ ապացոյց կ'ուզեն՝ գնա՛, շրջիր Հայաստանի վանորէից, քաղաքաց և գիւղերու մէջ, ուր կը տեսնաս բիւրաւոր գըրչագիր Աւետարաններ և նոցա մեկնութիւնք մագաղաթներու վրայ վայելուչ ծաղկենկարներով դրուած: Եւ այսօր իսկ Եկեղեցւոյն մէջ ամէն ընթերցուածներէն առաւել Աւետարան կը պաշտուի. վասն զի ժողովրդոց խնկելի գիրք Աւետարանն է, զոր կը համբուրէ յաճախ ամենայն ջերմեռանդութեամբ. թէ հիւանդանայ՝ Աւետարանին կը դիմէ, թէ զլուխ ցաւի նորատակ կը գնէ, թէ հաւատայ կատարելապէս իւր ցաւեր կը փարատին: Աւետարանին հրաշալիք մեծ է. միայն մարմնոյ ախտերը չի բժշկեր, այլ առաւել եւս հոգւոյն ախտերը կ'ապաքինէ:

Ես տրուպս, որ իբրեւ վարդապետ և

մատակարար պաշտօնեայ կոչուած եմ Ա-
ւետարանի սեղանոյն , նոյն ամենալի ան-
ըսպառ սեղանէն պատառ մի ճաշակ պատ-
րաստեցի Սիօնի որդւոց համար : Մատ-
թէոսի Աւետարանչին հինգերորդ , վեցե-
րորդ և եօթներորդ գլխոյն վրայ մեր մը-
տաց չափաւորութեամբ խորհրդածելով՝
դիւրաձեռն յօրինեցի այս փոքր Մատենիկ:
Այն նպատակաւ որոշեցի միայն այս երեք
գլուխ , վասն զի սոցա մէջ կը պարունակին
դրեթէ մեծ մասամբ Աւետարանի ճշմար-
տութեան բարոյական և փրկաւէտ օրէնք-
ներն , ուր Մովսիսին օրինաց թերութիւն-
ներն՝ Յիսուս կը լու դերահրաշ կատարե-
լութեամբ :


Աւետարանին երեք գլխոց իսկական բը-
նագիրն խորհրդով նախակարգեցի մեր
խորհրդածութեանց սկիզբն , որով թերեւս
լուսոյն չնորհիւ՝ լուսաւորի մեր ստուերա-
գիր խորհրդածութեանց պատկերն : Փոք-
րաջան աշխատութիւնս ուրիշ նպատակ մի

չունի , ուշիմ ընթերցող , բայց միայն Աւե-
տարանի Սուրբ օրինաց գիրեր դրոշմել
մեր սրտին մէջ , և միանդամայն համեմա-
տել մեր արդի ատելութեան վարք Յի-
սուսի քարոզած սիրոյ պատուիրանին հետ,
ու ճանչնալ փորձով թէ ստոյդ Աւետա-
րանին հարազատ որդիքներ կոչուելու ար-
ժանի եմք , եթէ իբրեւ խորթ և օտար
մերժուած եմք՝ մեր երկնաւոր Հօր որ-
դեզըրութենէն . որում արժանի կացոյց ըզ-
մեղ Սուրբ Հոգւոյն վերածնութեան չնորհ :

Առէք ընդունեցէք ուրեմն , ո՛վ եկե-
ղեցւոյ մօր հոգեծին մանկունք , Յիսուսէն
աւանդեալ արքայութեան սոյն Մարգա-
րիտ . զոր իբրեւ փոքրիկ մանեակ մի յօ-
րինելով ձեզ կը նուիրեմ :

Սողոմնի ձայն կը յորդորէ զձեզ , որ այս
մանեակ ձեր պարանոցէն կախէք . որպէս
իմաստուն վաճառական ամէն բան վաճա-
ռելով միայն Յիսուսի մարդարիտն ստա-
ցէք , որուն հետ բնաւ հաւասարութիւն

չունին բոլոր աշխարհիս թագաւորութեան
գանձեր : Ի՞նչ զին կը խնդրէ , դիտէ՞ք ,
այս մարդարտին տէր , ուրիշ ոչինչ , սիրտ
միայն : Ճ՛ւր ուրեմն , քո սիրտ , ո՛րդեակ ,
ինչպէս կը խրատէ իմաստունն , և ահա
կ'ստանաս մարդարիտն :



ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

ԵՐԿՆԻՑ



Նմանէ արքայութիւն Երկնից
առն վաճառականի, որ խնդրիցէ
մարգարիտս գեղեցիկս։ Եւ գըտ-
եալ մի պատուական մարգարիտ,
Երմեալ վաճառեաց զամենայն
զոր ինչ ունէր, և գնեաց զայն
մարգարիտ։

(Ա-ԷՊ · Մ-Պ-Ն · ԺԳ · 45)

Յիսուսի վարդապետութիւնն ի վերաց շերինն Գա-
յիշեացոց . յորում բովանդակի Սուետարանին ջնոր-
հաց եւ պշմարտութեան օրէնք . Մատթէոսի Սու-
տարանին հիմքերորդ գիշեն սկսալ մինչեւ ցեօժնե-
րորդ գիշեն վերջ։

823

ԴԼՈՒԽ Ե.

ԵՒ տեսեալ (Յիսուսի) զժողովուրդսն ել
ի լեառն . և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա
աշակերտք նորա . և բացեալ զբերան իւր ուսու-
ցանէր զնոսա , և ասէր :

Երանի՛ աղքատաց հոգւով , զի նոցա է ար-
քայութիւն Երկնից :

Երանի՛ սղաւորաց , զի նոքա մխիթարեսցին :
Երանի՛ հեղոց , զի նոքա ժառանգեսցեն
զերկիր :

Երանի' որ քաղցրեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին :

Երանի' ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն :

Երանի' այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն :

Երանի' խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին :

Երանի' որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից :

Երանի' է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ՝ վասն իմ. ցնծացէք և ուրախ լեռուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զբարդարէսն որ յառաջ քան զձեզ էին :

Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի՞ ի՞ւ յաղիցի. ոչ իւիք ազդիցէ այնուհետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել՚ի մարդկանէ :

Դուք էք լցո աշխարհի. ոչ կարէ քաղաք թագչել՝ որ ՚ի վերայ լերին կայցէ. և ոչ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ ՚ի վերայ աշխանակի, և լցո տայ ամենեցուն՝ որ ՚ի տանն իցեն. այնպէս լուսաւորեսցէ լցո ձեր

առաջի մարդկան, ոյնպէս զի տեսցեն զդործո ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինո է :

Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարդարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լուլ:

Ամեն ասեմ ձեզ՝ մինչեւ անցցեն երկինք և երկիր, յովիտ մի՝ որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն և ՚ի մարդարէից, մինչեւ ամենացն եղիցի :

Որ ոք լուծցէ մի ինչ ՚ի պատուիրանացս յայսցանէ ՚ի փոքրունց, և ուսուացէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից :

Իսկ որ արասցէ և ուսուացէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից :

Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առելի քան զդպրացն և զդարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից :

Լուարո՛ւք զի ասացաւ առաջնոցն, թէ մի՛ սպանաներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի:

Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տորապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղայր իւր յիմար՝ պարտաւոր լիցի ատենի. և որ ա-

սիցէ ցեղրայր իւր մորո՞ւ պարտաւոր լիցի գեհն հրոյն :

Աթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ , և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խիթ զքէն , թող զպատարագն քո առաջի սեղանոյն , և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում , և ապա եկեալ մատուսջիր ըզպատարագն քո :

Եր իրաւախո՞ւ ընդ ոսոխի քում վաղադոյն մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճանապարհի . գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորին , և դատաւորն դահնի . և արկանիցիս 'ի բանտ :

Ամէն ասեմ քեզ , ոչ ելանիցես անտի՝ մինչեւ հատուցանիցես զյետին նաքարակիտն :

Լուարո՛ւք զի ասացաւ՝ մի՛ շնար բայց ես ասեմ ձեզ , թէ ամենայն որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա , անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում :

Աթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ , խեւա զնա և ընկեա 'ի քէն . զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ , և մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի 'ի գեհնեն :

Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ , հաստ զնա և ընկեա 'ի քէն . զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ , և մի՛ ա-

մենայն մարմինդ քո արկանիցի 'ի գեհնեն :

Ապաքէն ասացաւ , թէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն :

Բայց ես ասեմ ձեզ , եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի սրունկութեան , նա տաց նմա չնալ , և որ զարձակեալն առնէ՝ չնայ :

Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն , մի՛ երդնուցուս սուտ , բայց հատուցես ծեառն զերդմունս քո :

Այլ ես ասեմ ձեզ՝ ամենեւին մի՛ երդնուլ , մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ , և մի՛ յերկիր՝ զի պատուանդան է սոփց նորա , և մի՛ յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի . և մի՛ 'ի գլուխ քո երդնուցուս , զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ :

Այլ եղիցի ձեր բան , այոն՝ այո , և ոչն՝ ոչ . զի աւելին քան զայն՝ 'ի չարէն է :

Լուարո՛ւք զի ասացաւ , ակն ընդ ական , և ատամի ընդ ատաման :

Այլ ես ասեմ ձեզ , մի՛ կալ հակառակ չարին :

Այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա և զմիւսն :

Եւ որ կամիցի ոք գատել և առնուլ զշապիկս քո , թող 'ի նա և զբաճկոն քո :

Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի ,
Քրթ ընդ նմա և երկուս :

Որում խնդրէ 'ի քէն՝ տուր , և որ կամի վոխ
առնուլ՝ 'ի քէն՝ մի՝ դարձուցաներ զերեսս :

Լուարուք ապաքէն զի ասացաւ , սիրեսցես
զընկեր քո , և ատեսցես զթշնամին քո :

Այլ ես ասեմ ձեզ , սիրեցէք զթշնամիս ձեր ,
օրհնեցէք զանիծիչս ձեր , բարի արարէք ատել-
եաց ձերոց , և աղօթս՝ 'ի վերայ այնոցիկ՝ որ
Ալին զձեզ և հալածեն . զի եղիջիք որդիք հօր
ձերոյ որ յերկինս է . զի զարեգակն իւր ծագէ
'ի վերայ չարաց և բարեաց , և ածէ անձրեւ 'ի
վերայ արդարոց և մեղաւորաց :

Զի եթէ սիրիցէք զայնոսիկ , որ սիրենն զձեզ՝
զի՞նչ վարձք իցեն . ոչ ապաքէն և մաքսաւորք
զնոյն գործեն . և եթէ տայցէք միայն ողջոյն
բարեկամաց ձերոյ՝ զի՞նչ աւելի առնէք . ոչ ա-
պաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն .

Արդ եղերուք դուք կատարեալք , որպէս և
հայրն ձեր երկնաւոր կատարեալ է :

ԴԼՈՒԽ Զ.

Զգոյշերուք ողորմութեան ձերում՝ մի՝ առ-
նել առաջի մարդկան , որպէս թէ 'ի ցոյց ինչ

նոցա . գուցէ և վարձս ոչ ընդունիցիք 'ի հօրէն
ձերմէ , որ յերկինս է :

Այլ յորժամ առնիցես ողորմութիւն . մի՝ հար-
կաներ վող առաջի քո , որպէս կեղծաւորքն առ-
նեն 'ի ժողովուրդս և 'ի հրապարակս , որպէս զի
փառաւորեսցին 'ի մարդկանէ :

Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա :

Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես , մի՝
գիտասցէ ձախ քո՝ զինչ գործէ աջ քո . որպէս
զի եղիցի ողորմութիւնն քո 'ի ծածուկ , և հայրն
քո որ տեսանէ 'ի ծածուկ հատուցէ քեզ յայտ-
նապէս :

Եւ յորժամ յաղօթս կայցես , մի՝ լինիցիս որ-
պէս կեղծաւորքն . զի սիրեն 'ի ժողովուրդս և
յանկիւնս հրապարակաց կալյաղօթս , որպէս զի
երեւեցին մարդկան :

Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա :

Այլ դու յորժամ կայցես յաղօթս , մուտ 'ի
սենեակ քո՝ և փակեա զդուրս քո , և կաց յա-
ղօթս առ հայր քո 'ի ծածուկ . և հայրն քո որ
տեսանէ 'ի ծածուկ հատուցէ քեզ յայտնապէս :

Եւ յորժամ կայցէք յաղօթս , մի՝ շատախօսք
լինիք իրրեւ զիեթանոսան . զի համարին թէ 'ի
բազում խօսից իւրեանց լսելի լինիցին . արդ մի՝
նմանիցէք նոցա . զի գիտէ հայրն ձեր զինչ պի-

մոյ է ձեզ, մինչքև ձեր խնդրեալ ինչ իցէ 'ի
նմանէ :

Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթս . Հայր
մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո . ե-
կեսցէ արքայութիւն քո . եղիցին կամք քո որ-
պէս յերկինս եւ յերկրի . զհաց մեր հանապա-
զորդ՝ տուր մեզ այսօր և թող մեզ զպարտիս
մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտա-
պանաց, և մի տանիր զմեզ 'ի փորձութիւն այլ
փրկեա զմեզ 'ի չարէ . զի քո է արքայութիւն
և զօրութիւն և փառք յաւիտեանս . ամէն :

Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս
նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր զյան-
ցանս ձեր :

Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս
նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ զյանցանս ձեր :

Եւ յորժամ պահիցէք՝ մի' լինիք իրեւ ըզ-
կեղծաւորսն տրտմեալք, որ ապականն զերեսս
իւրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան թէ
պահիցեն :

Ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա :

Այլ դու յորժամ պահիցես, օծ զզլուս քո
և լուս զերեսս քո, զի մի' երեւեսցիս մարդ-
կան իրեւ զպահող, այլ հօրն քում 'ի ծածուկ .
և հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուցէ քեզ:

Մի' գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց
և ուտիձ ապականնեն, և ուր գողք ական հա-
տաննեն և գողանան :

Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ
ցեց և ոչ ուտիձ ապականնեն, և ոչ գողք ական
հատաննեն և գողանան . զի ուր գանձք ձեր են,
անդ և սիրտք ձեր եղիցին :

Ճրադ մարմնոյ ակն է . եթէ ակն քո առատ
է, ամենայն մարմինդ լրւաւոր եղիցի . ապա
թէ ակն քո չար է՝ ամենայն մարմինդ խաւա-
րին եղիցի :

Իսկ արդ՝ եթէ լրյուդ որ 'ի քեզ է՝ խաւար
է, խաւարն ո՞րչափ եւս :

Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել . կամ
զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ, կամ զմին մե-
ծարիցէ և զմիւսն արհամարհիցէ . ոչ կարէք Աս-
տուծոյ ծառայել և Մասնայի :

Վասն այդորիկ ասեմ ձեզ . մի' հոգայք վասն
ողւոց ձերոց զինչ ուտիցէք կամ զինչ ըմլիցէք,
և մի' վասն մարմնոց ձերոց թէ զինչ աղանդիցէք .
ո՞չ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ և
մարմին քան զհանդերձ :

Հայեցարուք 'ի թոշունս երկնից՝ զի ոչ վա-
րեն և ոչ հնձեն, և ոչ մողովեն 'ի շոեմարանս,
և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա . ո՞չ ա-
պաքէն դուք առաւել էք քան զնոսա :

Իսկ արդ ո՞ի ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յա-
ւելուլ կարիցէ ՚ի հասակ իւր կանդուն մի :

Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք . հայեցա-
րուք ՚ի շուշանն վայրենի՝ որպէս աճէ . ոչ ջա-
նայ և ոչ նիւթէ . ասեմ ձեզ զի և ոչ Սողորօն
յամենայն փառսն իւրում զգեցաւ իրբեւ զմի
՚ի նոցանէ :

Իսկ եթէ զխոտն ՚ի վայրի , որ այսօր է և վա-
զիւ ՚ի հնոց արկանի , Աստուած այնպէս զգեցու-
ցանէ , ո՞րչափ եւս առաւել զձեզ . թերահաւատք :

Մի՛ այսուհետեւ հոգայցէք և ասիցէք . զինչ
կերիցուք կամ զինչ արբցուք կամ զինչ զգեց-
ուք . զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն .
քանզի գիտէ հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ
է ձեզ այդ ամենայն :

Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ
և զարդարութիւն նորա , և այդ ամենայն յա-
ւելցի ձեզ :

Մի՛ այսուհետեւ հոգայցէք վասն վաղուիհ , զի
վաղիւն վասն իւր հոգասցէ . շատ է աւուրն
չար իւր :

ԳԼՈՒԽ Ե .

Մի՛ դատիք՝ զի մի՛ դատիցիք . զի որով դա-
տաստանաւ դատիք՝ դատելոց էք , և որով չա-
փով չափէք չափեսցի ձեզ :

Զի՞ տեսանես զշիդյական եղբօր քո , և ՚ի
քում ական զգերանդ ոչ տեսանես . կամ զիա՞րդ
ասես ցեղբայր քո , թող հանից զշիլդ յականէ
քումմէ . և ահաւադիկ ՚ի քում ականդ գե-
րան կայ :

Կեղծաւոր , հան նախ զգերանդ յականէ
քումմէ , և ապա հայեսցիս հանել զշիլն յականէ
եղբօր քոյ :

Մի՛ տայք զըրբութիւն շանց , և մի՛ արկա-
նէք զմարդարիսոս ձեր առաջի խոզաց , զի մի՛
առ ոտն կոխիցեն զնոսա , և դարձեալ երդիծու-
ցանիցեն զձեզ :

Խնդրեցէք՝ և տայի ձեզ , հայցեցէք՝ և գըտ-
ջիք , բաղխեցէք՝ և բացցի ձեզ . զի ամենայն որ
խնդրէ՝ առնու , և որ հայցէ՝ դտանէ , և որ
բաղսէ՝ բացցի նմա:

Ո՞ իցէ ՚ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրեցէ որդիի
իւր հաց , միթէ քա՛ր տայցէ նմա . և կամ խընդ-
րիցէ ձուկն , միթէ օ՞ձ տայցէ նմա :

Արդ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պար-
գեւս բարիս տալ որդւոց ձերոց , ո՞րչափ եւս ա-
ռաւել հայրն ձեր որ յերկինս է՝ տայց բարիս
այնոցիլ որ խնդրեն զնա:

Զամենայն զոր միանդամ կամիջիք՝ թէ ա-
րասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք

նոցա . զի այս խակ են օրէնքն և մարդարէք :
Մաէք ընդ նեղ դուռն . քանի՛ ընդարձակ
է դուռնն և համարձակ ճանապարհն՝ որ տանի
՚ի կորուստ , և բազումք են որ մտանեն ընդ նա .
Քանի՛ անձուկ է դուռնն և նեղ ճանապարհն՝
որ տանի ՚ի կեանս , և սակաւք են որ գտա-
նեն զնա :

Զգոյշ լերուք լերուք ՚ի սուտ մարդարէիցն՝
որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց , և ՚ի
ներքոյ են գայլք յափշտակողք . ՚ի պաղց նոցա
ծանիթիք զնոսա :

Միթէ քաղիցե՞ն ՚ի վշոց խաղող կամ ՚ի տա-
տակէ թուզ :

Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի
առնէ , և ծառ չար՝ պտուղ չար առնէ :

Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար առնել , և
ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել :

Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի ,
հատանի և ՚ի հուր արկանի :

Ապա ՚ի պաղց նոցա ծանիթիք զնոսա :

Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր , մտցէ
յարքայութիւն երկնից . այլ որ առնէ զկամն հօր
իմոյ որ յերկինս է :

Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ . Տէր
Տէր՝ ոչ յանուն քո մարդարէացաք , և յանուն

քո դեւս հանաք , և յանուն քո զօրութիւնս բա-
զումս արարաք . և յայնժամ ասացից ցնոսա՝
եթէ ոչ երբէք գիտէի զձեղ . ՚ի բաց կացէք յի-
նէն ամենեքեան՝ ոյք գործէիք զանօրէնութիւն :

Ամենայն որ լիէ զբանս իմ զայսոսիկ և առնէ
զսոսա , նմանեսցի առն իմաստնոյ՝ որ շինեաց
զտուն իւր ՚ի վերայ վիմի . իջին անձրեւք՝ և խա-
ղացին գետք , չնչեցին հողմք՝ և բաղխեցին զտու-
նըն , և ոչ կործանեցաւ , քանզի ՚ի վերայ վիմի
հաստատեալ էր :

Եւ ամենայն որ լիէ զբանս իմ զայսոսիկ՝ և
ոչ առնէ զսոսա , նմանեսցի առն յիմարի , որ շին-
եաց զտունն իւր ՚ի վերայ տւագոյ . իջին անձ-
րեւք՝ յարեան գետք , չնչեցին հողմք՝ հարին
զտունն և անկաւ , և էր կործանումն նորա
մեծ յոյժ :

Եւ եղեւ իրեւ կատարեաց Յիսուս զամենայն
զբանս զայսոսիկ , զարմանային ժողովուրդ քն
ընդ վարդապետութիւն նորա . զի իրեւ իշխա-
նութեամբ ուսուցանէր , և ոչ որպէս դպիրքն
և փարիսեցիքն :



ՀԱՄԵՄԱՑՈՒԹԻՒՆ

ՄՈՎՍԵՍ ԵՒ ՅԻՍՈՒԽ

Մովսէս՝ Քորէբ լեռնէն յՆդիպտոս կ'իջնայ, Յիսուս երկինքէն յաշխարհ. մէկին ձեռք պատւհասի գաւազան կայ, միւսին ձեռք Խաչ և Աւետարան: Մովսէս՝ որ մարդ էր, իբրև Աստուած Փարաւոնին առաջ ահարկութեամբ կը խօսի. Յիսուս՝ որ Աստուած էր, Պիղատոսին և Հերովդէսին ատեան իբրեւ խուլ կը լրէ: Մովսիսին հրովարտակ պատուհասի արիւնով դրոշը ուժած՝ ողջ Նդիպտոսի անդրանիկներն կը ջարդէ. Յիսուսի Աւետարանին հրովարտակ հանուր Աշխարհին ներողութիւն կը բերէ: Ի՞նչ համեմատութիւն կայ. մէկին մէջ մահ, միւսին մէջ կեանք: Մովսէս շօշափելի խաւար բերելով Եդիպտացիքը ահատեսիլ գիշերի մէջ անկապ կը կաշկանդէ. Յիսուս ճշմարիտ լուսով բովանդակ աշխարհ կը լուսաւորէ և խաւարին կապերէն կ'արձակէ մարդիկ: Մովսէս կարմիր ծովը պատառելով միայն խարայէլի ժողովուրդ յազատութիւն կը հանէ. Յիսուս ոչ Հրէայն կը խորէ, ոչ հեթանոս, այլ բոլոր մարդիկ խաւարին իշխանութեան գերութենէն կը փրկէ: Մովսէս կ'առաջ-

նորդէ դէպ ՚ի Սինայի անջուր անապատ. Յիսուս դէպ ՚ի երկինք. մէկին հովուութեան մէջ քաղց, ծարաւ, միշտ արտունջ, յուսահատութիւն, պատժախառն բարերարութիւն, ապերախտութիւն, բարկութիւն Աստուծոյ, բանակին կոտորումն, և այլ բազմադիմի յանցաւորութիւն ժողովը դեան, և պատիժ յԱստուծոյ. միւսին մէջ կենաց հաց և ջուր, հաւատք, լի յոյս, սէր, խաղաղութիւն, չնորհք, ներողութիւն: Մովսէս Տաննարաննեայ օրինաց տախտակներն բարկութեամբ կը խորտակէ. Յիսուս կը շինէ զայն Աւետարանին հեղութեան արուեստով: Մովսէս աններողէ, հայթայիթանաց կրկուտ ժողովող խեղճ պառաւ խոկոյն կը քարկոծէ. Յիսուս՝ չնացեալ կիներն ներողութեամբ կ'արձակէ. Մովսէս՝ պերախտ ժողովրդոց համար ապառաժ քարէ ջուր հանելու կը զլանայ. Յիսուս առայտ, կը կանչէ, որ ծարաւին է եկեսցէ առիս: Մովսէս Բէսէլիէլին ճարտարապետութեամբ Աստուծոյ խորան կը կանգնէ, Ահարոննեան քահանայից Ճեռքով անբան զոհեր կը մատուցանէ միշտ յանցաւորաց քաւութեան համար. Յիսուս այս կորան Գողգոթային գլուխ կը շինէ, անուն Եկեղեցի կը դնէ. նոյն ինքն է զոհ և քահանայ մշտնջենաւոր. ուր միանդամ կը զենանի Աաշին վրայ և հանուր

աշխարհի փրկութիւն կը գործէ : Մովսէս ժողովրդոց ոսկորներն անապատին մէջ կը թողու , ինքն եւս Նաբաւ լեռան գլուխ՝ Աւետեաց երկրին կարօտ մնալով կը մեռանի . Յիսուս՝ յաղթող Յեսուն է , որ ոչ միայն զԵրիքով կը տապալէ՝ այլ և խաւարին իշխանի ամրացած բռնութիւններն կը խորտակէ : Մովսէս միայն Հրէական ժողովուրդը Ախնային ահաւոր անապատին մէջ երկիւղի և պատժական օրինօք կը դաստիարակէր . Յիսուս , նոյն ժողովուրդ Երուսաղէմի քաղաքէն , Սոլոմոնի տաճարէն , դպրաց ու փարիսեցւոց նախանձոտ չարութենէն որոշելով դէպ ՚ի Գալիեայի լոին ու խաղաղ անապատ կը քաշէ : Փարիսեցւոց աթոռն՝ Մովսէսի բարձր աթոռն էր . Յիսուսին նատարան ապառաժ քար էր , տաճարին տեղ՝ դաշտավայրն էր :

Նոյն օրէնսդիրն Աստուած՝ Ախնայի ահաւոր բարձրութենէն կ'իջնէ մինչեւ Պաղեստինոյ խոնարհ դաշտագետին , ամպին մէջն մառախուղով և ահաւոր ձայնով որոտացող անմատչելին Աստուած՝ իբրեւ ցող մեղմարար կ'իջնէ , գետնոյն վրայ խոնարհելով կը նստի . այս տեղ ընտանեբար կը մերձենան իւր մօտ՝ ժողովուրդք , աշակերտք , հրեայ , հեթանոս . իսկ անդ ո՛վ որ մերձենար՝ քարկոծ կը լինէր մարդ և անասուն :

Երբէք նմանութիւն մի չիկայ Ախնային և այս դաշտին մէջ . Ախնայի լեռ կը ցածնայ իւր ըստուերական Մովսէսի օրինօք , դաշտ կը բարձրանայ մինչեւ երկինք՝ Յիսուսի նորահրաշ Աւետարանով ; Մովսէսին երես քօղապատ էր , ժողովուրդըն ահով կը մերձենար և կը զարհուրէր նըշմարել երեսին լցու . Յիսուսին երես բայց է . իւր ձառագոյթ մեղմագոյն է . արեւուն պէս չի խայթեր . իւր մօտ կը կանչէ և կը շրջապատին ամեն մարդկի՝ որ աշխատած են , որ բեռնաւոր են , որ քաղցած են , որ ծարաւի են : Լոէ՛ ուրեմն ո՛վ Մովսէս , թո՛ղ խօսի Յիսուս . Գալիլեայի դաշտին մէջ թող բացուի վլիմին ակն , յորմէ կենդանութեան ջուր յորդելով առողմանէ այն ծարաւցած ոն թալվացած մարդկային անապատ . որուն համար Խսայիսս աւետիս կուտար , « Ուրախ լըր անապատ ծարաւի : » Մովսէսիկան աղբիւր կը ցամաքի , Յիսուսին կապատանայ :



ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՄԱՏԹԵՈՍ Ե. ՎԵՐԱՅ
ԻՆՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՔ
ԴԱՌ Ա.

ԵՐԱՆԻ' ԱՂՔԱՏԱՑ ՀՈԳԻՈՎ . . .

Երկնախօս վարդապետն կը բանայ նոր Աւետարանի փրկութեան մատեան , Կ'սկսի մի առ մի աւանդել ինն Երանութեանց դասն : Երանի կուտայ նախ հոգւով աղքատներուն , որոց համար եկէր էր ինքն Օծեալն Աստուծոյ . « Հոգի Տեաւն ՚ի վերայ իմ , վասն որոյ և էօծ խակ զիս . » և այլն : Ո՞վ են հոգւով աղքատներն . նոքա են որ զօրհանապազ կը մարտնչին սատանայի ամբարտաւանութեան դէմ . որոց սրտին բաւականութիւն միայն Աստուծած է . աշխարհիս ըռվանդակ մեծութիւն հոգւով աղքատին սիրտ կարող չէ լցնել . զի նորա սիրա՝ ընչից վարթամութեանէն իսպառ զատուած է : Ի՞նչ նմանութիւն կայ Յիսուսի և աշխարհի տուած երանութեանց մէջ . աշխարհ երանի կուտայ բոլոր փարթամերուն , որ զօրութեամբ սկերճանալով

Կ'իշխեն հասարակ ամբոխին՝ ու բաղմութեան վրայ : Յիսուսի երանին տարօրինակ է . նա երանի կուտայ նոցա միայն , որք աշխարհիս փարթամութեան տակ ձնշուած կը հեծեն և կը հարլստահարին բաղմադիմի զրկանքներով : Յիսուս թող կուտայ աշխարհիս փարթամեներուն բաժին , հոգւով աղքատներուն աւետիս կուտայ , թէ ձեր ժառանգութիւն երկնից արքայութիւնն է : Աւետարանի երանութիւն՝ փարթամեները չի զրկեր , այլ նոյն արքայութիւն կը խոստանայ եթէ արտաքին փարթամութեան մէջ հոգւով աղքատ լինին : Արքահամ՝ մեծահարուստ ստացուածոց մէջ հոգւով աղքատ էր . Յակովի՝ բազմավաստակ ընչից , բարգաւաճեալ որդւոց և թոռանց մէջ՝ հոգւով աղքատ էր . Յովոէփի՝ Եգիպտոսի փառաւոր իշխանութեան մէջ՝ հոգւով աղքատ էր . Մովսէս՝ Աստուծածատուր բարձըր իշխանութեան մէջ՝ հոգւով աղքատ էր . Դաւիթ՝ թագաւորական աթուին վրայ հոգւով աղքատ էր , և կը խոստովանէր , « Աղքատ և ցաւած եմ ես , Աստուծած , փրկութիւն քո ընկալցի զիս : » Հոգւով աղքատութիւն աշխարհիս աշքին առաջ արհամարհ կը թուի , այլ երկնից և Աստուծոյ առաջ՝ մեծարոյ և պատուական է :

ԵՐԱՆԻ' ՍԳԱԽՈՐԱՑ . . .

Յիսուս երանի կուտայ աշխարհիս սգաւորաց.
ո՞վ էին սգաւորներն . անաստուածութեան ըստ-
ուերին տակ նստող աղքատներն էին . խաւա-
րին իշխանութեան տակ կապուած գերիներն
էին . աշխարհիս հրապարակին մէջ անարդուած-
խեղճերն էին . չաստուածոց տաճարներուն ա-
ռաջ անմուռնչ կրոց կենդանի զաւակներ զո-
հող գժբախտ մայրերն էին . Յիսուսի փրկութիւն
միայն սրբեց սոցա արտասուք ու միսիթարեց
զիրենք . Եսային տեսաւ ու գուշակեց, « Տալ
ագաւորաց Արօնի փառս , փոխանակ մոխրոյն
օծումն ուրախութեան : » Ոչ միայն Երուսաղէ-
մին կամ մոխրոյն վրայ նստող Արօնին որդիք
այս երանութեան հաղորդ եղան , այլ իսկապէս
ժառանդեց այս երանութիւն հեթանոսական
տաճարներուն մէջ զոհագործող մոխրաշունչ ժո-
ղովուրդ : Արտ առէք , մի՛ վհատիք , ո՞վ որ կը
սգայք իւրաքանչիւր ձեր արդի մեծամեծ աղէտ-
ներու մէջ . համբերեցէք մինչեւ իսպառ . սուդ
չի տիրեր յաւիտեան , կ'անցնի մի վայրկենի մէջ .
ձեր տրտմութիւն յաւէրժ ուրախութեան կը
փոխուի :

ԵՐԱՆԻ' ՀԵԶՈՑ . . .

Յիսուս երանի կուտայ հեղոց . ո՞վ են այս
հեղերն . զորս Աստուած 'ի մարտ կը հանէ աշ-
խարհիս բարկութեան դէմ . ջրհեղեղի դարուն
ամբարտաւան հոկայից դէմ՝ նոյ արդար նա-
հապետ . անաստուած ազգաց դէմ՝ աստուա-
ծապաշտն Աբրահամ՝ սպառնացող Եսաւին դէմ՝
հեղն Յակովը . նախանձոտ եղրաց դէմ՝ փոք-
րիկն Յովսէփ . Փարաւոնին դէմ՝ Մովսէս . Սա-
ւուղին դէղ՝ Դաւիթ . աշխարհիս իշխանին դէմ՝
իւր միածին Յիսուս . բարբարոս բռնաւորու-
թեանց դէմ՝ Յիսուսի աշակերտներն :

Հեղութիւն Աւետարանի որդւոց զինքն է .
նովաւ տիրեցին աշխարհիս . հեղութիւն երկինք
և երկիր միանդամայն ժառանդեց . բարկու-
թեան որդիքներն իբրեւ հուր շիճան հեղու-
թեան ջուրին առաջ . Քրիստոնէական վարուց
հեղութիւն յաղթանակեց աշխարհիս բոլոր դի-
մադրող բարկութեանց , ամէն խստութիւն նորա
առաջ իւր բնութիւն փոխեց . առիւծն զգօնա-
ցաւ՝ եղին հետ սէր կապեց , գայն՝ գառն դար-
ձաւ՝ հօտին հետ ճարակեց : Այսպէս թագաւոր-
եցին Աւետարանի հեղ որդիք զոր Դաւիթ նը-

կատեց հոգւով. «Այլ որ հեղքն են, նոքա ժառանգեսցին զերկիր» :

ԴԱՍ Դ.

ԵՐԱՆԻ ՈՐ ՔԱՂՅԵԱԼ ԵՒ ՄԱՐԱԻԻ ԻՑԵՆ ՎԱՍՆ
ԱՐԴԱՐՈՒԱԵԱՆ . . .

Ցիսուս երանի կուտայ նոցա, որ արդարութեան դէմքաղցած ու ծարաւիեն. ո՛վ են սոքա. Սրբահամու հարազատ որդիք, և ակնկալող ժողովուրդ հեթանոսաց : Ադամէն մինչեւ 'ի Փրկիչ վեց հազար տարուան միջոց, նոյն Ադամայ ապերջանիկ սերունդ անաստուածութեան մէջ սովալուկ եղած՝ երկնից արդարութեան կ'սպասէին : Սրդարութիւն երկնից յանկարծ իջաւ Հրէաստանի դաշտին մէջ և այս խօսք Աւենտարանց . «Ես եմ հացն կենդանի իջեալ յերկնից» . Դաւիթ և Եսայի միաձայն աւետիս տալով քաղցեալ ժողովրդոյ կը հրաւիրեն զիրենք 'ի նոյն արդարութեան սեղան . «Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր, երանեալ է այր որ յուսայ 'ի նա . Որ ծարաւի իցէք երթայք 'ի ջուրն այն, կամ կշտալինդ վայելեցէք զգալստեն՛ դորա:»

Խաչին հանդէս Ցիսուսի արդարութեան լըրումն է . ուր տեղ եզն զենեց, գինին խառնեց, հրաւիրակներն զրկեց՝ անըզգամներն կանչեց .

Կէէք, ո՛վ ազգ մարդկան, կերէք այս հաց, խըմեցէք ուրախութեամբ այս գինին, զոր պատրաստեցի ձեզ. այսուհետեւ 'ի բաց թողէք կը-ուամութեան անզգամութիւն, զիս խնդրեցէք, որ Աստուծոյ իմաստութիւն և արդարութիւն եմ. զիս ճաշակեցէք, որ այլ եւս չանօթենաք, զիս խմեցէք, որ այլ եւս չի ծարաւիք :

ԴԱՍ Ե.

ԵՐԱՆԻ ՈՂՈՐՄԱԾԱՑ . . .

Ցիսուս երանի կուտայ ողորմածաց ու կը վճռէ թէ միայն ողորմածներն կ'արժանանան փոխադարձ ողորմութիւն գտնելու : Երկնից Հօր մեծագորով որդին գթութեան օրէնք կը հաստատէ իւր եղբարց մէջ, անդթութիւն կը բառնայ աշխարհիս մեծատանց որտէն, կը կարձէ զրկանք և յափշտակութիւն մաքսաւորի ձեռքէն աշխարհիս փշրանաց կարօտ Ղազարուներն նոյն սեղանին վրայ բազմելով մեծատանց հետ հաւասարապէս կը ճաշակեն . փողոցի մուրացիկ աղքատներն Աշոտ ողորմածին պալատ հրաւիրելով նորա հետ սեղանակից կը բազմին, հոգւով աղքատն՝ մարմնով աղքատներուն հետ ուրախութեան բաժակներ կը խմէ . աշխարհիս հը-

պարտներն կը մեղադրեն զինքն , հոգ չէ . Աշու-
տին անուն մատենագիրք Ողորմած կը դրումեն :

Աւետարանին գթութեան ձեռք գերիներուն
չկթաներն կը քակէ , պարտատեաց մուրհակներն
կը պատառէ , մերկերուն հանդերձ կուտայ , օ-
տարները 'ի տուն կը ժողովէ , կարօտելոց հաց
կը կարկառէ , ծարաւելոց ջուր . մէկ խօսքով՝ ա-
մէն խնդրողին կուտայ , ամէն լացողին արտա-
սուք կը սրբէ . այս գթութեան օրէնք՝ սիրոյ
ազբերին վտակն է , որ կը բզիսի Աւետարանի
ակնէն :

Այս երանին ձեզ համար չէ ուրեմն , ո'վ աշ-
խարհիս անդութեալ քարասիրտ փարթամներ .
դուք որ միայն Քրիստոնեայ անուն կը կրէք ,
դուք որ մամոնայն և փառք առաւել կը պաշ-
տէք . բաւական էր թէ միայն չողորմէիք տնան-
կին . այլ և անխնայ կը կափէք զանաւագն ու կը
հարստահարէք զտնանկն . երկնից արդարութիւն
զձեղ յաւուր չարի չպիտի փրկէ , որովհետեւ
դուք ձեր մեծութեան կը յուսայք և ալքատին
համար բնաւ չէք խորհիր : Ավ , աշխարհիս հը-
րապարակներու մէջ մեծատանց դռներուն ա-
ռաջ դեգերող աղքատներ , տրտոնջ մի՛ հանէք ,
համբերեցէք սիրով . ձեր տեղն Արքահամու դողն
է , իսկ անողորմիցն 'ի դժոխս : Դուք 'ի նոցանէ

այսօր հաց կը խնդրէք , օր մի պիտի դայ , յո-
րում նոքա սաստիկ ծարաւէն պատակելով ձեզմէ
կաթ մի ջուր պիտի խնդրէն , այն ինչ դուք դը-
րախտին գետերով կը զովանաք գուարթ զուարթ :

ԴԱՐ Զ.

ԵՐԱՆԻ' ԱՅՆՈՑԻԿ ՈՐ ՍՈՒԻՐԲ ԵՆ ՄՐՏԻԿԻ . . .

Յիսուս Երանի կուտայ նոցա , որ սրտով սուրբ
են . նոքա միայն կարող են Աստուած տեսնելու
Աւետարանի ճշմարտութիւն սրտի կրօնէ , մարմ-
նոյ կրօն չէ . սրտի սրտութիւն առաւել կը պա-
հանէք իւր հաւատացեալ որդիքներէն . 'ի բաց
կը մերժէ փարիսեցական մաքրութիւններն , երբ
սիրոյ զաւածեալ է անմաքրութեամբ . այսինքն
երբ Աստուծոյ և ընկերին սէր չունի սրտին մէջ ,
երբ սիրոյ տեղ՝ հեռ և նախանձ կը կրէ , երբ
պարզութեան տեղ՝ նենդութիւն և միամտու-
թեան տեղ՝ խորամանկութիւն , երբ բարութեան
տեղ՝ միշտ չարութեան խորհուրդ կը յղանայ :
Այսպիսի նենդ ժոտ սիրտեր երբէք ընդունարան
չեն Աւետարանի սուրբ կրօնին . ո՞ւր պիտի օ-
թեւանին Յիսուս և իւր Հայր , եթէ սիրտն սրբ-
րութեամբ պատրաստուած չէ : Մարդոյն սիրտն
է միայն չարութեան և բարութեան անօթ . զոր
պէտք է սրբենք՝ չարաչար կրից ժանդոտութե-

նէն։ Մարդ կարող չէ իւր սիրտ թագուցանել։ վասն զի սիրտն աղբիւրին ներքին ակն է, յորմէ դառն կամ քաղցր միշտ կը բղիսն դէպ ՚ի դուրս։ Թէ փափագիս ուրեմն զԱստուած տեսնալ, ո՞վ Քրիստոնեայ, սրտիդ բժժոտ աչք սրբրէ և Դաւթին բերանով պաղատէ առ Աստուած։ «Սիրտ սուրբ հաստատեա յիս, Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ՚ի փորի իմում։»

ԴԱՍ 1.

ԵՐԱՆԻՇ ԽԱՂԱՂԱՐԱՐԱՅ . . .

Յիսուս երանի կուտայ խաղաղարար մարդոց, որք Աստուծոյ Որդիք պիտի կոչուին։ Աւետարանն է միայն խոռվեալ աշխարհիս խաղաղութեան դաշնագիր, զոր խաչին և նոր ուխտին արիւնով կը կնքէ Յիսուս ու կը քարողէ հանուր տիեզերաց։ Մինչդեռ աշխարհիս տիրապետող բռնութիւններն անդադար մարտ կը մղէին, երկնից թագաւորութիւն յԵրուսաղէմէն սկըսեալ հաշտութիւն կը քարողէ։ Յիսուս և իւր Աւետարանն են միայն հօր Աստուծոյ կողմէն խաղաղութեան պատգամաւորք։ Մովսէս երկու Երբայեցի եղբարց մէջ մտնելով ՚ի հաշտութիւն կը համոզէ զիրենք։ «Արք Եղբարք էք, ընդէ՛ք

զրկէք զմիմեանս . . ։ Յիսուս գողգոթայի գլուխ խաչի բարձր բեմին վրայ կեցած ընդհանուր աշխարհիս բոլոր այլակրօն ազգաց խաղաղութիւն կ'աւետարանէ։ Խաղաղութիւն Նրէին և Հեթանոսին մէջ, խաղաղութիւն խուժաղութ ազգերու մէջ։ Խաղաղութիւն եղին և առիւծուն, գաոխն և գայլին մէջ, խաղաղութիւն երկնից և երկրի մէջ, հրեշտակաց ու մարդիկներու մէջ։ Այս խաղաղութիւն աշխարհս կարող չէր տալ. ոչ Աղքամանդր, ոչ Կեսար, ոչ Օդոստոս, ոչ Կիւրոս. Քրիստոս առւաւ միայն. ուստի Հօր Աստուծոյ արդարութեան առաջ ինքն է միայն ճշմարիտ որդիխութեան ու երանութեան ժառանգորդ։ Ո՞վ եկեղեցւոյ հարազատ որդիք, մեր անդրանիկ եղբօր Յիսուսի խաղաղարար օրինակին հետեւելով՝ նախ նորա և իւր խաչի սիրոյն համար հաշտուինք իրարու հետ, ինչպէս կը յորդորէ սուրբն Պօղոս. և ապա իրրեւ խաղաղարար միջնորդ՝ խոռվեալ և անջատեալ եղբարք կապենք իրարու հետ. այս առաքինութեամբ միայն կարող եմք Հօր Աստուծոյ արժանաւոր որդիք կոչուիլ։ Խաղաղարարն՝ Աստուծոյ որդի է. ո՞ւմ որդի է այն, որ կը խոռվեցուցանէ, որ կը գրգոէ, որ եղբարց մէջ փոխանակ սիրոյ ատելութիւն

կը սերմանէ , որ ընտանիքներ կը բաժանէ , որ
մարդկային միութեան կապեր կը քակէ , որ Քը-
րիստոսի եկեղեցւոյ յօդակապ մարմին մասն մասն
կը կարատէ . յայտ իսկ է թէ այսպիսի խաւա-
րագործ մշակ լուսոյ Հօր որդի չէ . այլ խաւա-
րին հօր :

ԴԱՍ Ը.

ԵՐԱՆԻ՝ ՈՐ ՃԱԼԱԾԵԱԼ ԻՑԵՆ
ՎԱՍԻ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ . . .

Յիսուս Երանի կուտայ նոցա , որ արդարու-
թեան համար կը հալածուին : Արդարութիւն
նոյն ինքն էր , որ յերկնից երեւեցաւ . արդա-
րութիւն լցու էր , խաւարը տեսաւ զինքն և ըս-
կեց հալածել . Հերովդէս հալածեց մինչեւ յԵ-
գիպտոս , դպիրքու փարիսեցիք հալածեցին մին-
չեւ 'ի Գողդոթայի գլուխ : Խաչին վերայ մեռ-
նող Աստուծոյ արդարութեան համար հալած-
ուեցան Աւետարանի ճշմարտութեան բոլոր քա-
րողիներն . և այն ինչ հալածանք կարող չչը կար-
ծել նոցա աղատ լեզուն՝ մահուամբ երկրէս բառ-
նալ կ'ուզէին արդարութեան կենդանի վկայ-
ներն : Անթիւ որդիք եկեղեցւոյ՝ Տիրոջ նման
անմռունչ ոչխարի պէս աշխարհիս անզգամներէն

'ի սպանդ վարեցան : Այս՝ եկեղեցւոյ կեանք՝
հալածանք է . իւր որդւոց երջանկութիւն՝ չար-
չարանք : Խաչակիր սուրբն Պօղոս այլ այսպէս
կուսուցանէ . «Որ կամիցին աստուածպաշտու-
թեամբ կեալ 'ի Քրիստոս Յիսուս՝ 'ի հալածանս
կայցեն : »

ԴԱՍ Թ.

ԵՐԱՆԻ՝ Է ՁԵԶ ՅՈՐԺԱՄ ՆԱԽԱՏԻՑԵՆ ԶՁԵԶ . . .

Յիսուս իններորդ Երանին կ'ուզէս առ իւր
աշակերտաս . որք հանդերձեալ էին նախանի մար-
դարէից նման , մանաւանդ Յիսուս վարդապե-
տին պէս դէպ 'ի Գողդոթայի ճանապահ երթալ .
որոց համար նոյն խաչին ծանրագոյն վիշտ պատ-
րաստ կար . կամակար սիրով տանել այն ամէն
նախատանաց , զոր թէ ընտանի խրայէլի ազ-
գէն և թէ կռապարիշտ հեթանուներէն անձնա-
նուիրաբար կրելյանձնատու էին : Ոչ աղաղակել ,
ոչ վիճել , ոչ եւս տրտունջ բառնալ , Տիրոջ հե-
զութեան նմանելով . թող սպանեն զձեզ , թող
թափի ձեր արիւն 'ի գետին , ձեր արեան երաշ-
խաւորն ես եմ , կըսէ Յիսուս , կաթիլ մի չի
կորսուիր : Արդար Աքէլի օրէն մինչեւ 'ի Զաքա-
րիա՝ Աստուծոյ սիրելեաց ճանապարհ արիւնով

բացուած է : Զեզմէ յառաջ մարգարէներն նոյն շաւղով գնացին . ահաւասիկ և ես կերթամ, օ՞ն և դուք աշակերտք իմ, ետեւէս եկէք :

ԴԱՍ Ժ.

ԴՈՒՔ Է՞ ԱՂ ԵՐԿՐԻ . . .

Մարդկացին կեանք Ադամին մինչեւ 'ի Քրիստոս փատեր էր բոլորովին հնութեան և ապականութեան մէջ . հոգին անկրօնութեամբ վարակեր էր, մարմին հիւծական ախտով . ամէն անդամներով դլիսէն մինչեւ ոտք չարաչար վէրքերով լցուած անխնամ թողուած էր աշխարհիս աղբիւսին վրայ . ոչ տէր ունէր, ոչ օգնական, ոչ բժիշկ, ոչ այցելու : Վասն այսորիկ Դաւիթբոլոր մարդկութեան բերնէն աղաղակ կը բառնար իւր անձին ցաւոց համար . « Նեխեցան և փատեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ » : Քրիստոս իրեւ իմաստուն բժիշկ՝ այս կեանք վերանորոգելու համար եկաւ . որ ահա իւր աշակերտներն իրեւ աղ կը ցանէ բոլոր աշխարհիս ապականեալ մարդկութեան վրայ . որոց կը պատուիրէ ճանչնան իրենց կոչումն առաքելական պաշտօնին մէջ . միշտ առնելով ուսուցանել քան թէ սոսկ բանիւ . անհամ չի դառնալ

կամ հեզգութեան մէջ կամ տգիտութեան մէջ կամ անբարոյ ընթացից մէջ : Եթէ անհամ լինիք, ասէ, այնուհետեւ դուք պիտանի չէք եկեղեցւոյն . դուք յայնժամ ինքնին անարգուելով կոխան կը լինիք ոտից, և խսկառ կը կորսուի ձեր աղին ազդեցութիւն :

ԴԱՍ ԺԱ.

ԴՈՒՔ Է՞ ԼՈՅՍ ԱՇԽԱԲՇՀԻ . . .

Ցիսուս իւր սեպհական անուն կը կնքէ իւր աշակերտաց վրայ . զի ինքն իսկ էր լցո աշխարհի :

« Ես լցո յաշխարհ եկի » : Այս լուսարեր արեւ Հրէ աստանի հորիզոնէն ծագելով՝ առաքեալք իրեւ լուսոյ ճառագայթներ կը սփռէ հանուր աշխարհին վրայ : Գնացէք, կըսէ, փարատեցէք հեթանոսութեան խաւարն . դուք երբ աշխարհի լցոն էք, երբէք կարելի չէ որ ծածկուիք, բարձր լեռան վրայ շինուած քաղաք չի թաքչիր : Ես զձեղ իրեւ ճրագ վառելով կը դնեմ Աւետարանի քարոզութեան բարձրագոյն աշտանակին վրայ, դուք պիտի լուսաւորէք բոլոր աշխարհիս տուն : Զգոյշ եղիք, որ կեղծաւոր դալրաց ու փարիսեցւոց պէս ձեր ճրագի լցոյ՝

կուրութեան գրուանին տակ չի թագուցանէք։ Առանց զձեղ նախ լուսաւորելու՝ դուք կարող չեք ուրիշներ լուսաւորել։ Զեր առաջնորդութիւն Մովսիսի առաջնորդութեանէն մեծ է։ նա միայն Հրէական ազդին էր, դուք բոլոր Հեթանոսաց նորա բանակին առաջ լուսեցին ամպ կ'ընթանար, իսկ ձեր լոյս ձեր անձնէն պիտի արտափայլի։ Ի՞նչ է այս լոյս վարուց ուղղութիւն, անարատ կեանք, սէր՝ ատելութեան դէմ, համբերութիւն՝ հալածանաց դէմ, ներողութիւն՝ յանցաւորաց դէմ, հեղութիւն՝ բարկութեան դէմ, խոնարհութիւն՝ ամբարտաւանութեան դէմ, գրկանք՝ անիրաւութեան դէմ, խաղաղութիւն՝ հակառակութեան դէմ։ Ի վերջո, բոլորովին լոյս՝ խաւարին դէմ, պարանոց՝ սուրբին դէմ, մարմին՝ կտտանաց դէմ, կեանք՝ մահուան դէմ։

Այս է ահա ձեր առաքելութեան լուսաւոր վարք, զոր պէտք է տեսնէ աշխարհ ու փառաւորէ ձեր Հայր, որ երկինքն է։

Ողբալ պէտք է այս տեղ, ո՛վ պաշտօնակից եղբարք։ Քրիստոս զմեղ լոյս կ'անուանէ, մեք տգիտութեամբ խաւար դարձանք։ իբրեւ լոյս և ճրագ՝ Տէր որոշեց զմեղ ուրիշներ լուսաւորելու ։ մեք մեր աղօտ լուսով նոյն իսկ մեր անձն լուսաւորելու բաւական չեմք։ Քրիստոս զմեղ

աղ կը կոչէ, մեք մեր ընդարոյս և եկամուտ անհամութեամբ անպիտան համարուեցանք չունիմք իրաւունք բոլորքել թէ ժողովուրդն յանդգնութեամբ ոտից կոխան առնելով կ'անպատուէ զմեղ հրապարակներու մէջ այլ պէտք է ուշաբերելով մտաբերենք և մեզէն ինքնադատ լինելով վճռենք այս դատաստան, թէ մեր անպատռութիւն՝ մեր տգիտութեան երեսէն է։

ԴԱՍ ԺԲ.

ՄԻՇԱԿԱՐԻՔ ԵԹԷ ԵԿԻ ԼՈՒԾԱՆԵԼ ԶՈՐԵՆՍ . . .

Յիսուս իւր աշակերտաց առաքելութեան դասերն աւարտելին զինի՝ կ'սկսի նոր պատուիրանաց դաս, որով հին օրինաց թերութիւն կը լեցնէ։ Թերևս կարծիք ունէին Հրէայք և օրինաց դպիրք, թէ Քրիստոս եկեր է հին օրինաց կապեր խալառ քակելու։ Ուսափ կ'ըսէ, «ՄիՇԱԿԱՐԻՔ եթէ եկի լուծանել զօրէնս և զմարդարէս», և այն։ Նոյն օրէնսգիրն Աստուած մինչ երբեմն Մովսիսին ձեռքով օրէնքներ կուտար, ինքնին յաշխարհ գալով՝ հին օրինաց արմատին վրայ նոր Աւետարանին աղատ օրինաց ձիւղեր կը պատռաստէ։ Արմատ չի խլեր, այլ առաւել եւս կ'ամբապնդէ Աստռածադադիր օրինաց ցանկ,

զոր մարդոյն ձեռք երբէք կարող չէ խրամատել զայն . մինչեւ անցնին երկինք և երկիր՝ օրինաց կամ մարդարէից տառերէն նշանախեց մի չպիտի եղծուի : Ով որ համարձակի այս պատուիրաններէն փոքրիկ կարծուած պատուէր մի լուծել զանցառութեամբ և այնպէս ուսուցանել, այնպիսին երկնից արքայութեան մէջ փոքր և աննըշան կը համարուի . նա իւր տիրոջ առաջ աղնիւ ծառայ չէ , այլ անհաւատարիմ հեղդամիտ մշակ, որ աւանդեալ օրինաց տաղանդ ամբուլջապէս չի գործադրեր : Այս', մեծ կը գրեմ, ձեր անուն երկնից արքայութեան մէջ , եթէ Աւետարանի պատուէրներն կատարելսակէս ուսուցանէք : Եւ ահաւասիկ այս տեղ այժմէն իսկ ձեզ բացախօսութեամբ կ'իմացնեմ . եթէ ձեր արդարութիւն դպրաց ու փարիսեցւոց կեղծեալ արդարութենէն չի գերազանցի ճշմարտութեամբ՝ դուք կարող չէք երկնից արքայութիւն մտնալ : Նոքա Աստուծոյ անխառն սուրբ օրինաց հետ ծերոց աւանդութիւն խառնելով կ'ուսուցանեն . դուք պարտիք զայն ամենայն ճշմարտութեամբ հաւատարմապէս ուսուցանել, ոչ յաւելուլ, ոչ հատանել :

ԴԱՅ ԺԴ.

ՈՐ ԲԱՐԿԱՆԱՅ ԵՂԲՈՐ ԻՒՐՈՒՄ ՏԱՐԱՊԱՐԵՇՈՅ.

Ցիսուս իւր Աւետարանի տասլարով չարութիւն արմատէն կը կարէ . Մովսէս կը պատուիրէ չապանանել, Ցիսուս գեհենի կրակին պարտաւոր կը դասի զայն, որ ՚ի զուր տեղ իւր եղրօր վրայ կը բարկանայ . ձեռք յայնժամ՝ կ'ապանանէ երբ մարդոյն սիրտ կը զայրանայ լի ցասմամիտ : Այս նոր պատուիրան կ'ապանայ չի բարկանալ, որպէս զի ձեռք կարձի սպանութենէն և սուր պատենէն չի հանէ :

Գեթսեմանի ձորին մէջ այն ինչ Պետրոս՝ Վարդապէտին սիրով և միանգամայն վրէժիշնդրութեան ոգւով վառուած սուրը պատենէն հանեց և զարկաւ զինուորին ականջը կտրեց , հեզ Ցիսուս սաստեց զինքն , որ սուրն ՚ի պատեան գնէ : Բարկութեան և վրէժիշնդրութեան ոգին կրակէ և ներքուստ կը տանջէ զմարդ , սորա համար Ցիսուս վարդապէտն սորվեցուց մէր իւր հեղութեան դասն . « Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ և գտջիք հանդիսատ անձանց ձերոց . » որով յայտնի կը պատուիրէ որ Աւետարանի հեզ որդիքները բարկութեան սուրն ՚ի պատեան գնեն , ցածուն , ներողամիտ և խա-



զաղացէր լինին . որպէս զի Քրիստոնէական ճրշ-
մարիտ ընկերսիրութեան պարտիքը լիովին կա-
տարեն :

ԴԱՍ ԺԴ.

ԹՈՂ ԶՊԱՏԱՐԱԳՆ ԻՎԵՐԱՅ ՍԵՂԱՇՈՅՆ . . .

Յիսուս այնչափ կը մեծարէ սիրոյ և հաշտու-
թեան օրէնք , մինչեւ թողուլ կը պատուիրէ սե-
ղանին պատարագ և նուէր , երթալ նախ հաշ-
տութիւն և սէր կապել այն եղրօր հետ , որ
խէթ ինչ կամ կասկած ունի իւր մտքին մէջ՝ թէ՝
իրաւ թէ անիրաւ , կարծելով թէ եղբայր զրկեր
է զինքն կամ ո՛ւ և իցէ պատճառաւ մի վիլաւո-
րեր է նորա սիրտ : Աւստի Աւետարանին սիրոյ
օրէնք պարտաւոր կը կացուցանէ զմեզ , եթէ
զրկեր ենք եղբայր՝ վճարենք նորա փոխադարձ .
իսկ եթէ ոչ փարատենք իւր կասկած , խօսելով
համոզելով դարձեալ չինել ու կցել զինքն ՚ի սէր
եղբայրութեան : Աթէ այսակէս , զուր կ'աշխա-
տիս ուրեմն սեղանին առաջ երթալ և զԱսու-
ուած ՚ի հաշտութիւն ողոքել պատարագով , ե-
թէ չի հոգաս նախ խոռված եղբօրդ հետ հաշ-
տուիլ :

Առանց այս պայմանին ոչ խունկ , ոչ մոմ ,

ոչ նուէրք , ոչ պատարագ , ոչ աղօթք , ընդու-
նելի չեն Աստուծոյ առաջ :

ԴԱՍ ԺԵ.

ԿԵՐ ԻՐԱՒԱԽՈՀ ԸՆԴ ՈՍՈԽԻ ՔՈՒՄ . . .

Յիսուս , որ հանդերձեալ ոչխարհին ահեղ
դատաւորն է , որչափ խնամով կ'ուսուցանէ ,
մինչդեռ կենցաղոյս ձանապարհին վրայ կամք՝
մեր սասիս ընկերին հետ իրաւախո՞ւ լինմէք : Նե-
րողութեան օրէնսդիրն չուզէր երբէք , որ եր-
կու եղբարց անհաշտ մնալով՝ դատը արդարու-
թեան ատենին մնայ . վասն զի երկուքէն ո՛ր
մէկ դատապարտուի՝ նորա համար կ'աղէկիզի
երկնաւոր Հօր սիրտ , քանզի իւր որդին է և
Յիսուսին եղբայր : « Ահ մեծ է անկանիլ ՚ի ձեռու
Աստուծոյ » կ'ըսէ սուրբն Պօղոս . հանդերձեալ
դատաւորին ատեան՝ արդարութեան սուր մի
է , Սովոմօնի դատաստանին պէս խակոյն մէջ-
տեղէն կը կտրէ երախայն . մարդկային ատեան
կ'ողոքի կաշառով , երկնից ատեան՝ ոչ երբէք .
վասն զի « Արդար է Տէր և զարդ սրութիւն սիրէ ,
և զուղղութիւն տեսանեն երեսք նորա :

ՈՐ ՀԱՅԻ Ի ԿԻՆ ՄԱԱՐԴ ԱՌ Ի ՑԱՆԿԱՆԱԼՈՅ. . .

Մովսիսեան օրէնք՝ չնութիւն կը համարի յայն-
ժամ միայն, երբ մարդ իրօք կը չնանայ, Յիառ-
ոին գերազանց օրէնք նոյն չնութեան արմատ
սրտէն կը կորէ. ուստի կ'ըսէ. Ով որ ցանկա-
նալու համար 'ի կին մարդ հայի, նա իւր սրտին
մէջ կը չնանայ չարութեան խորհրդով։ Այո՛,
որչա՞փ մեծ է Աւետարանին այս զգուշութեան
պատուէր։ Աչք՝ սրտին կարապետն է, որ կ'ըզ-
բօնու միշտ աշխարհիա առարկայից վրայ բնա-
կան հակամիտութեամբ և մարդոյս զգայարանաց
մէջ ամենէն դիւրազգացն է։ Սրտի ցանկու .
թիւն միշտ մոխրին տակ թաղուած գաղտնի հուր
մի է. աչաց հայեցուածքն է, որ զայն կը վառէ
և կը բորբոքէ 'ի վատթարն։ Ճշմարիտ է այս.
Սուրբ Գիրք բազմադիմի օրինակներ կը հանէ
մեր առաջ։ Դրախտի ծառն, որ գեղեցիկ էր և
հաճոյ աչաց հայեցյ՝ զնախահայրն մեր հրասլու-
րեց 'ի պատուիրանազանցութիւն։ Աեթայ ցեղի
Աստուծոյ որդիքներն՝ կայենի դստերք տես-
նալով չժուժեցին, այլ 'ի նոցանէ ամուսին ընտ-
րելով՝ Աստուծոյ որդիքներն մոլորեցան որդւոց
մարդկան հետ, մինչեւ համաշխարհական ջրհե-

ղեղ ողողեց զիրենք առ հասարակ 'ի կորուստ։
Դաւիթ մինչդեռ իւր պալատի տանիքին վրայ
կը ձեմէր՝ աչքին զրօսանք դարձաւ 'ի իերոսարէն.
յորմէ հետեւեցաւ կատարեալ չնութիւն և անտի
ձեռնարկեց այն ահեղ ոճրագոճութեան, որուն
համար զօրհանապաղ լալով իւր մահիմ կը թըր-
ջէր։ Կը թողում յիշել աստ Յակովին դուստր
Դինա, Յովսէփի գեղեցիկ, Յուդիթ և Շուշան,
որք առ հասարակ աչքին թակադով բռնուեցան,
ու ըմբռնեցին։ Ով կարող է աչքի գայթակղու-
թենէն ազատ մնալ. նա միայն, որ Աստուծոյ
երկիւղ, Յիառուսի սէր, խաչին երախտիք յաձախ
կրելով սրտին մէջ՝ միշտ յաղօթս կ'ապաստանի։
« Դիր, տէր, պահապան բերանոյ իմոյ և դուռն
ամուր շրթանց իմոց։ զի մի՛ խոտորեսցի սիրտ
իմ բանիւ չարութեան»։ « Տէր զրօսանս աչաց
մի տար ինձ և զցանկութիւն դարձո՛ յինէն»։

Յիառուս այնչափ մեծ ու կարեւոր կը դատի
մեր սրտէն արմատովի խէլ ցանկութեան կիրք,
մինչեւ բացարձակ հրաման կ'ընէ 'ի բաց կարել
մեր մարմնոյ այն պիտանի անդամներն, որ մեր
սրտին ու հոգւոյն գայթակղութեան առիթ կը

լինին, այսինքն հանել լուսատու աչք ու կտրել գործակատար ձեռք. բարի ու լու է անաչք և անձեռն մնալ, քան թէ ամբողջ մարմնով գեհենի կրակին մատնովիւ Հոգւոյն կեանք ու բարեմասնութիւններն ամբողջ պահելու համար՝ մարմնոյ հեշտութեան զգայարանքներն զոհել կ'ուսուցանէ Աւետարան. զի հոգի առաւել է քան զմարմին: Թող այս, եթէ աչքդ զարնը ուած է մի բանի որուն հակամիտեալ ես մուլեկան կիրքերուդ բուռն յօժարութեամբ. թող զայն, կարէ, հեռացուր քեզմէ երբ գայթակդութեան առիթ է քեզ: Աշխարհիս ճանապարհի մէջ այս դարանակալ օձի որոգայթէն փախչել մեծ արիութիւն է: Յովսէփ մինչդեռ մօտ էր և բռնուած, թող տուաւ իւր հանդերձ, փախաւ ազատեցաւ, մարմին մատնեց բանտին և շղթային, հոգին ազատ մնաց վառվաշ կնոջ հրապուրանաց կապանքէն: Գաւիթ այս որոգայթէն բացակայ էր բաւական, բայց խոյս չի տալով բըռնուեցաւ արագ. Ուրիշ Քետացւոյ պարախիլ որսորդն զինքն իրբեւ թոչուն մի նետահար՝ պալատի պատշգամէն վար ձգեց: Ուրեմն եթէ մօտ ես՝ խոյս տուր, եթէ հեռու ես՝ մի՛ մօտենար, աչքէդ միշտ զգուշացիր, որ սրտիդ մէջ վատ կիրքերու տեղի չի տաս:

ԴԱՍ ԺԲ.

ՈՐ ԱՐՁԱԿԻՑ ԶԿԻՆ ԻՒՐ . . .

Մովսէս Հրէից խատարտութեան համար ամուսնեաց միութեան կապ յակամայից կտրելու սահման կը դնէ. այսինքն ատելի կամ արհամարեալ կին՝ իւր այրէն բաժանելով, ապահարզանի այն է արձակման թուղթ մի տալ ձեռք: Յիսուս այս նուիրական կապ անլուծանելի կերպով կ'ամրապնդ է, Աստուածական վճռով մի՛ ինքելով զայն « Զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ: » Աստուած այս պատկ զուգեց դրախտին մէջ: Ադամն ընդունեց զայն, ճանչցաւ այս մեծ խորհրդոյն գերազանցութիւն և զուրցեց այս նշանաւոր խօսք. « Թողցէ այր զհայր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. » և այն է Վասն զի Ադամը իրբեւ մարգարէ մի գուշակեց թէ նորաստեղծ կին՝ իւր մարմնոյ ոսկերներէն առնուած կող մի է՝ ձիշդ նման է ինքեան, որսով ինքն և իւր կին մի մարմին կը կազմեն նոյն և համատիպ, չիկայ բնաւ մարդկային օրինաց սուր մի, որ կարենայ սոյն միացած մարմին ընդմէջ բաժանել: Եկեղեցին Աւետարանի այս խօսքը « Առանց բանի պոռնկութեան » հիմն բռնելով՝ դուն ուրեք ներտղապէս կ'արձակէ այն կին, որ

անհաւատարիմ է սուրբ ամուսնութեան պայմանին մէջ և յայտնապէս պոռնիկ : Աստուծոյ այս գերագոյն օրէնք անխախտ պահելով՝ ոչ ոք կարող է Եկեղեցւոյ հրամանէն դուրս ինքնահաճոյ տնօրէնութիւն մի առնել : Խստաբարոյ Հրեայք շատ անգամ թէթեւ պատճառներու համար կ'ատէին իրենց կիներ ու արհամարհանօք դուրս կը հանէին առնէն . Աւետարանին արդարութիւն կանանց իրաւունք պաշտպանելով՝ պլունկութեան պատճառէն ՚ի զատ ուրիշ պատճառ մի իրաւացի չի համարիր ամուսնական կապին պինդ հանգոյց քակել : Սուրբն Պօղոս, որ Քրիստոսի հոգին կը կրէր, մեծ պատկառանօք կը յարգէ տիրոջ օրէնք . « Այլ կանամիեւանցն պատուիրեմ, ոչ ես՝ Այլ Տէր, կնոջ յառնէ մի՛ մեկնիլ . ապա թէ մեկնեսցի, անայր մնասցէ, կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի և առն զկին իւր մի թողուլ » :

Դ.Ա. ԺԹ.

ԱՅԼ ԵՂԻՑԻ ՁԵՐ ԲԱՆ, ԱՅՈՒՆ՝ ԱՅՈ, ԵՒ ՈՉՆ՝ ՈՉ .

Հին օրինաց մատեան՝ միայն սուտ երդումն կ'արգիլէ . իսկ նոր Աւետարան երդման խօսքերն խսպառ կը մերժէ և կը հրամայէ ամենեւին

չերդնուլ ոչ սուտ ոչ ճշմարիտ, ոչ երկինք որ Աստուծոյ Աթոռն է, ոչ երկիր որ նորա ոտից պատուանդանն է, ոչ Երուսաղէմ, որ նորա սուրբ քաղաքն է և ոչ եւս ՚ի գլուխ մարդոյ, որ կարող չէ մազ մի սուեղծել թուխ կամ սպիտակ : Այլ ձեր խօսքերուն ճշմարտութեան պայման այս միայն բաւական է . այսն՝ այո՛ ասել և ոչն՝ ոչ . քան զայս աւելին սրտի խարդախութենէն է : Քրիստոնէական եղբայրութեան մէջ երբէք հարկ չիկայ երդման, երբ ընկերական սիրոյ և հաւատարմութեան պայմաններն պահուին, որ է խօսքին պարզ կերպարանք չպատըրուակել ընկեր խաբելու նպատակաւ . հապա ամէն բանի մէջ անկեղծ խօսիլ ուղիղ և ճշմարիտ դատել : Ստախօսութիւն՝ հին չարագիւտ հնարք է, որ օձին բանսարկութեամբ մարդոյն ականջն ապականեց . ոլ որ սուտ կը խօսի, նա որդի չէ Աւետարանի ճշմարտութեան . այլ գըրախտի օձին հետեւող արբանեակն է : Որչա՞փ թեթեւ է այնպիսեաց առաջ Աւետարանին այս ահաւոր պատուէր, որք աշխարհիտ շահավաճառութեան մէջ . ոչ թէ երկինք, գետին, Երուսաղէմ, գլուխ, այլ Ամենակալ Աստուծոյ մեծ անուն միշտ երդմամբ յեղյեղելով կը խօսին և կը խաբեն : Եթէ արարուած բաներուն պատիւը

Կը պահանջէ Աստուած , որչա՞փի իւր վեհ անուան ,
որ նոյս արարչապետն է : Կամ փախչիլ կամ
զգուշանալ պէտք է ժամանակիս պատրող ու
խարուսիկ կեղծաւորներէն . « մէկն կ'երդնու ,
միւսն կը հաւատայ . ճարտար լեզուն կը կեղծէ ,
պարզամիտ կը խաբուի . սուս և կեղծաւոր քա-
զաքավարութիւնն մեր ընկերական կեանք իս-
պառ խանգարեր է : Այսպիսի սուտակասպաս
մարդոցմէն ազատ կենալու համար՝ Դաւթի
խնդրուածներով առ Աստուած դիմենք . « Ապ-
րեց զիս , Տէր , զի նուազեաց սուրբ . նուազե-
ցան ձշմարտութիւնք յորդոց ՚ի մարդկանէ : Ի
նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում , շըր-
թամբք նենդաւորօք սրտէ ՚ի սիրտ խօսեցաւ :
Համբերենք ուրեմն միշտ այս ազօթելով . Տէր
վրէժխնդիր է , օր մի կը բառնայ երկրէս այն
անձն , որ իւր ընկերին հետ նենդաւոր շրթունք-
ներով կը խօսի :

ԴԱՍ Ի.

ՄԻՌ ԿԱԼ ՀԱԿԱՌԱԿ ԶԱՐԻՆ . . .

Մովսիսի օրինաց դատավճիռ ատեան աննե-
րով խստութեամբ պատուհաս կը վճռէ . Ակն
ընդ ական , ատամն ընդ ատաման . այսինքն է

վնասին տեղ դարձեալ վնաս վոխարինել : Ինչ էր
այս օրինաց զօրութիւն . աշքին տեղ՝ աչք , ա-
տամին տեղ՝ ատամ միշտ վճարելով՝ մարդկային
ընկերութիւն կոյր և ատամնաթափի կը կացու-
ցանէր : Օրինաց խստութիւն այսպիս մարմին
պատժելով՝ հետզհետէ խեղանդամ կ'ընէր ողջ
մարդիկ , պատուհասի երկիւղ թէպէտ և չարու-
թիւն կարձել կ'ուզէր մարդկային ընկերութե-
նէն , այլ վրէժխնդրութեան հոգին խալառ կա-
րող չէր հանել մարդոց ոխակալ սրտէն :

Յիսուս Մովսիսին տէր՝ իւր ծառայէն աւելի
հեղ է , այս վրիժառու բարկութեան կրակ կը
շիջուցանէ նոր պատուիրանադրութեամբ . « Այլ
ես ասեմ ձեղ մի՛ կալ հակառակ չարին » : Ո՛վ որ
աջ երեսիդ ապատակ կը զարնէ՝ ձախն եւս դար-
ձուր . ո՛վ որ շապիկդ կը հանէ , բաձկոնդ ալ
թով տուր . ո՛վ որ զբեղ մլոն մի տեղ բռնա-
բար կը վարէ , գուն երկու մլոն գնայ . ո՛վ որ
քեզմէ կը խնդրէ , տուր . ո՛վ որ փոխ առնուլ
կ'ուզէ՝ գժկամակութեամբ երեսդ մի՛ դարձու-
ներ : Այս է ահա Աւետարանի մշտնջենաւոր հաշ-
տութեան սքանչելի օրէնք , սիրոյ և խաղա-
զութեան աստուածանշան աղեղն , զոր Վրիս-
տոս միայն երեր յաշխարհ , այն ինչ ինքն իրեւ-
արդար նոյին զոհ՝ Գողգոթային զլուխ զենուե-

ցաւ, իւր կարմիր արեան կաթիլներու ցօղերէն նոր հաշտութեան աղեղն կամարաձեւ յօրինեց խաչին վրայ. Նոյ միայն չը տեսաւ զայն, այլ բովանդակ աշխարհ:

Զարին դէմ հակառակելով՝ կը զայրանայ չարն. չարին դէմ հեղանալով՝ կը զիջանի չարն: Մովսիսին օրէնք հուր էր, որ միշտ բարկութիւն նիւթելով՝ մարդիկ իրարու դէմ՚ի վրէժխնդրութիւն կը վառէր. Յիսուսի օրէնք ջուր է, որ մարդոց սրտի բարկութեան հրդեհ խսպառ կը շիջուցանէ: Ո՞վ են այս երկու գերադոյն օրէնքսովիրք. մէկին ձեռք սուր՝ երեսէն բարկութեան բոց կը փայլառակի, ներել բնաւ չը գիտեր, թշնամին և ատելին առ հասարակ կ'ըսպանանէ. միւսին ձեռք խաչ և Աւետարան՝ իւր ատելին իրբեւ բարեկամ կը սիրէ և 'ի սրտէ կը ներէ իւր չարանենդ թշնամոյն: Մովսէս և Յիսուսն են սոքա. մէկն նեղ սիրտ մարդ է, միւսն երկայնամիտ Աստուած. չափէ այս տեղ մարդոյն և Աստուծոյ գութ. մէկին վճիռ մահ է, միւսին կեանք. Մովսէս աղդասէրէ, Յիսուս մարդասէր. Մովսէս մարդկային ընդարձակ սիրոյն պայման կ'ամփոփէ միայն Հրէական ազգին վրայ, ուստի կը պասուիրէ օտարազգի թշնամին մահու չափ ատել և ընտանի ազգակից սիրել: Այսպէս չէ

Յիսուսին պատուէր, ոյլ բարձր և գերագոյն Յիսուս մարդկային ընկերութեան անպայման սիրոյն չափ չիներ այս կամ այն ազգի վրայ ամփոփելով, հասլա մէր կ'ընդարձակէ համատարած մարդկութեան վրայ. և կը հրամայէ առանց խարութեան սիրել այն ամենայն, որ մարդէ և ընկեր, չբաժանել իրարմէ բնաւ Հրէայն և Հեթանոս: Աւետարանի ուսման մէջ ամէն դասերէն բարձրագոյն դասն է այս, զոր աշխարհի որդիք կարող չեն սորվիլ. միայն Աւետարանի աշակերտաց մէջ խիստ փոքրիկ մասն են այս դասին համար մրցանակ առնողներն: Մինչդեռ աշխարհ թշնամին կ'ատէ, ո՞վ կարէ ընդունել. աշխարհն լիկողաց և չարչարողաց համար նղոփք կը կարդայ, ո՞վ կարէ հալածիչներ օրհնել կամ ատելեաց համար բարիս մաղթել: Այս՛ Յակովը, Յովսէփի և Դաւիթի առանց Աւետարանի աշակերտութեան ուսան այս դաս, իսկ Մարգարէք, Առաքեալք, Մարտիրոսք, Հայրապետք, այս դասին մէջ քաջավարժ հանդիսացան: Որչա՞փ բարձր ու վեմ է սոյն առաքինութեան նպատակ. անկատար մարդ՝ Աստուծոյ կատարելութեան կը վերածէ, աշխարհիս որդիքներ երկնաւոր հօր որդիքներ կը գրէ, որ իւր արեւ և անձրեւ բարեաց և չարեաց, արդարոց և մեղաւորաց վրայ հաւասար կը բաշխէ:

Աշխարհ իւր սիրելին կը պիրէ , աշխարհ իւր
բարեկամաց միայն ողջոյն կոտայ . Աւետարան
իւր ընտիր զաւակներ կ'որոշէ և կը զատէ աշ-
խարհիս սովորական ճանապարհէն ու կեղծաւոր
վարմունքէն և կ'առաջնորդէ դէպ ՚ի եւս կա-
տարելագոյն ճանապարհ . երկնաւոր Հօր կա-
տարելութեան նմանութիւն՝ հարազատ որդիք-
ներէն կը պահանջէ : Այս մարդ մահկանացու և
ապիկար իւր փոքրիկ անձին չափաւորութեամբ
միայն կարող է առաքինանալ , թող չի ձգտի
յանդգնութեամբ . Հօր Աստուծոյ անհասանելի
կատարելութեան հաւասարիլ : Ի՞նչ հաւասարու-
թիւն ունի կաթիլ մի ջուր՝ անսահման ովկիա-
նուին հետ , նշյլ մի լոյն՝ արեւուն հետ , նուաստ
արարած մի՛ իւր Արարչին հետ : Մարդոյն կա-
տարելութիւն՝ միայն իւր ուժին և դրուած-
պատուիրաններուն չափով է . երանի՛ թէ նոյն
չափով բաղձայինք առաքինանալ , բաւ և շատ էր :



ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԹԷՈՍԻ Զ . ԳԼԽՈՅՆ ՎԵՐԱՅ



ԴԱՍ ԻՌ.

ԶԳՈՅՑ ԼԵՐՈՒՔ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՁԵՐՈՒՄ . . .

Յիսուս Մովսէսի օրինաց թերի մնացած դա-
սերն՝ իւր Աւետարանի բարձրագոյն դասերով
լրացոյց . այս վեցերորդ գլուխոյն մէջ կ'սկսի ըզ-
գուշութեան նոր դասեր աւանդել . որով կը
դաստիարակէ իւր նորընծայ աշակերտք ու մի-
անգամայն բոլոր հաւատացեալներն , որպէս զի
չի նմանին դպրոց ու փարիսեցոց , որոց ամէն
գործքեր արտաքին կեղծաւորութեամբ խառնը-
ուած էր . ողորմութիւն , պահք և ազօթք իրենց
համար միայն խարէութեան միջոց մի էր : Երու-
սաղէմի հրապարակին մէջ , բազմախաւոն ժողո-
վը գոյց առաջ փող հարկանելով , աղքատներ
հրաւիրելով ՚ի տես աշխարհի ողորմութեան նը-
ուէրք կը բազիսին : Ի՞նչ էր նոցա մտաց գաղտնի
նապատակ , ուրիշ բան չէր , այլ թէ մարդիկներ
տեսնան և գովութեամբ հռչակելով փառաւորեն

զիրենք : Այս մոլորամիտ կեղծաւորներն երկնաւոր Հօրէն վարձք մի չէին յուսար . բաւական կը համարէին մարդոց տուած գովութիւն և փառք : Դուք , կ'ասէ Յիսուս , հեռացէք փարիսեցւոց կեղծաւոր կերպէրէն . այնչափ զգուշութեամբ ու ծածուկ տուէք ձեր ողորմութիւն կարուեալ անձին , մինչեւ աջ ձեռին տուած՝ ծախ ձեռք չիմանայ . վստահ եղերուք մի՞ կասկածիք , Աստուած հաւատարիմ է . նա երբ ծածուկ կը տեսնայ ձեր արոց նուէրք՝ յայտնապէս՝ ի տես աշխարհի կը վճարէ վարձք . ուստի հարկ չէ , որ տեսնող մարդիկ իրեւ վկայ կացուցանէք ձեր առաքինութեան :

ԴԱՍ ԻԲ.

ԵՒ ՅՈՐԺԱՄ ԿԱՅՅԵՔ ՅԱՂՅԹՍ . . .

Յիսուս ալզօթից պատշաճագոյն դասն նոյնպէս ամենայն զգուշութեամբ կ'աւանդէ , որ կեղծաւորաց նմանն հրապարակներու անկիւններ չշնչիւն ձայնով չալզօթենք՝ մարդկանց առաջ իրեւ թերմեռանդ Աստուածապաշտ երեւնալով . Փարիսեցիք ի՞նչ նկատումն ունէին այս կերպ ալզօթքէն . դարձեալ նոյն փառք և գովութիւն որսալ մարդիկներէն . թէ իրենք հասարակ մար-

դոցմէն որոշուած՝ աւելի արգար , կրօնապաշտ և պատուիրանապահ երկիւղած մարդիկ են : Այսպէս էին այս արտաքին երեւոյթով , այլիրենց սիրտ և երիկամունք բոլդումին զուրկ էր սուրբ կրօնի զգացումէն : Խարէութեան դամերու մէջ խիստ վարժ լինելով՝ քաջ դիտէին արտաքին կերպարանքով բարեպաշտ ձեւանալ :

Յիսուս վարդապետ իւր նորափարժ աշակերտները կը հանէ փարիսեցւոց կեղծաւորութեան դպրոցէն և կը մուծանէ Աւետարանին պարզութեան դպրոց . որուն դասն այս է , չալզօթել փողոցներու անկիւն ՚ի լուր մարդկանց , այլ մըտանել առանձին իւր սենեկին մէջ , կամ լուեւս իւր սրտի խորութեան մէջ և այնպէս ազօթել առ երկնաւոր Հայրն . քանզի սրտին անձայն մրմունջ ու հառաչանք շուտ կը հասնեն երկինք Զօր ականջ , քան թէ շրթունքներուն բարձր աղաղակ : Դանիէլ Բարփլօնէն երես գէպ ՚ի Երուսաղէմի տաճար դարձուցած կ'ալզօթէր՝ տաճարին Տէր կը լսէր . երից մանկանց օրհնութեան ձայն հնոցի շառաչող բոցոյն մէջն մինչեւ երկինք կը հասնէր . Յովեանու ձայն ծովուխոր անդունդէն , կէտ ձկան փորէն ալիքներ պատառելով դէպ ՚ի վեր կ'ելլէր : Սրտի ձայն արագընթաց է և միշտ համելի Աստուծոյ առաջ :

ՄԻՌ ՇԱՏԱԽՕՍ ԼԻՆԻՔ . . .

Յիսուս ոչ միայն կը խոտէ վարիսեցական աղօթից ձեւ, այլ նոր դաս մի եւս կ'աւանդէ, որ հեթանոսներուն պէս աղօթելց ժամ շատախօս չլինիմք: Այս պատուէր ուզիղ հասկցիր, ով Աւետարանի հետեւող աշակերտ: մի՛ կարծէր բնաւ թէ Տէր կը մերժէ երկարատեւ աղօթք կամ անձանձրոյթ խնդրուածք: քա՛ւ ոչ երբէք: Եթէ այսպէս, ապա ուրեմն ինքն իւր վարդապետութեան դէմ հակառակ կը գործէր, որ շատ անգամ առանձնանալով՝ ի Զիթենեաց լեռ, ովզ գիշեր կ'աղօթէր և նոյն ինքն կը պատուիրէր յամենայն ժամ աղօթել ու չճանձրանալ: Ուրեմն հեթանոսաց շատախօսութիւն միայն երկարաժամ աղօթից վրայ չէր, հապա առելի անպատշաճ բազմադիմի խնդրուածներ կը պարունակէր իրենց աղօթագրեանց մէջ, ինչ որ աշխարհիս ունայն մեծութեան կը վերաբերէր: գոր օրինակ թագաւորութիւն, իշխանութիւն ճոխութիւն, հարսաւութիւն, բախտի յաջողութիւն: մէկ խօսքով, աշխարհիս, մարմայն և այլ պէս պէս ունայնափրութեան վայելչութիւններ, որոց կը յօժարամանէր հեթանոսական մարմալապութիւն:

ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆԸ ԵՍ . . .

Աւետարանին սուրբ գիտութիւն երբ աշխարհիս խաւարեալ որդիքներ լուսաւորեց, բացեց նոյա առաջ հանդերձեալ աշխարհին դռւռն: սորմեցուց իրենց թէ գուք որդիք մարդկան, այսուհետեւ երկնաւոր Հօր ընտանեկան զաւակներն էք, ձեր մեծախնամ գորտվալից Հայր գիտէ թէ ինչ պէտք է ձեզ: նա աշխարհիս մահկանացու հայրերուն պէս տիմար և ապուշէ: Ահա ձեր աղօթից նոր համառօտ դասն: սորմեցէք ամենայն ուշագրութեամբ: « Հայր մեր որ յերկինս ես »: Դրախտի հայրենի տունէն տարագրուած որդիք՝ բազմաստուած հեթանոսութեան մէջ մոլորուելով՝ մոռցան այն ճշմարիտ Հօր Աստուծոյ Ամենակալ անուն: որ երկնից բարձրութեան մէջ կը բնակի: Յիսուս նորա միածին Որդիին յայտնեց մեզ Հօր անուն և պատուիրեց որ խնդրենք այսուհետեւ նոյն սուրբ անուն յիշուի իւր հաւատացեալ որդւց վրայ: Թող եղծուին ու կորսուին աշխարհիս խաւար իշխանին դրած Արամազդայ, Անահիտայ և Բահաղի ալիղծ անուններն: Թող գայ տիրէ մեր վրայ երկնից մշտնջենաւոր ազատ թագաւորու-

թիւն . նորա ոտից պատուանդանի տակ վշրվն
Նաբուգողնոսորի բարձրագոյն արձան և հին
աշխարհի բռնակալութեանց գահերն : Բարձրե-
լցն իշխանութեան վիմբ բոլոր տիեզերք լցուց
և իւր տակ ճմիեց ամէն բարձրացած հպար-
տութիւններն : Աստուած երբ տիրեց արդարու-
թեամբ , այլ եւս ափրապետող աշխարհիս կամք
չի մնաց : Աւետարանի որդիք չուտ մոռցան աշ-
խարհ և աշխարհիս բազմանուն հայրեր , վաղ ու
վարժ արտասանեցին Յիսուսին այս դասն « Ե-
ղիցն կամք քո որպէս յերկինս և յերկրի » : Այ-
սինքն ո՛վ Տէր մեր և Հայր , ինչ որ երկնից աստ-
ուածպետական ատենիդ մէջ կը կամիս և կը
տնօրինես հաւատացեալ որդւոցդ հսմար՝ բարի
են : Գիտեմք քո կամք , որ մարդոյն յաւիտե-
նական կեանք է , ամօթապարտ դէմքով կը խոս-
տվանիմք ստոյդ թէ աշխարհիս բռնաւոր հայ-
րեր 'ի զուր զմեզ չարչարեցին ու խաբեցին . ոչ
ոք 'ի նոցանէ յաւիտենական կեանք խոստացաւ
մեզ . իրենք իրենց անոտի յոյսերով մէկտեղ դե-
րեզմանին մէջ կորսուեցան :

ԴԱՍ ԻԵ .

ԶԱՅՑ ՄԵՐ ՀԱՆԱՊԱԶՈՐԴ ՏՈՒՐ ՄԵԶ ԱՅՍՈՐ .

Յիսուս մեր հոգւոյն համար կենաց հաց կը
մատակարարէ , բայց մեր մարմնոյն աճման ա-
ռօրեայ պարէնն եւս չի մոռնար . այլ կ'ուսու-
ցանէ նոյն իսկ կորստական հացին համար եւս
թախանձել դշայր . « Զհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր » : Այո՛ , ամէն քաղցեալներ
հացի կ'սպասեն , մարդ , անասուն , թուչուն .
Հօր Աստուծոյ ձեռքն է որ կը բանայ և կը կե-
րակրէ զայսոսիկ : Նա՛ չքոտի ճճին անդամ կը
տեսնայ ու կը իննամէ , չի մոռնար . եթէ խոռ-
վելով իւր երես դարձունէ , եթէ արեւն և անձ-
րեւ արդիէ , մեր մարմնոյ կեանք և ուժ պակ-
սելով՝ մեք իսկոյն 'ի հող կը դառնամք : Շնոր-
հալի սուրբ Հայրապետ այս կէտ քաջ կը բացատ-
րէ . « Հայն զմարմինն բուծանէ , բանն զհողին
կեցուցանէ » : Այս երկու կարեւոր պարէն՝ որ
մեր իսկական կենդանութիւն է , կարօտ ենք
հանապազ խնդրել մեր երկնաւոր Հօրէն :

ԴԱՍ ԻՉ.

ԹՈՂ ՄԵԶ ԶՊԱՐՏԻՍ ՄԵՐ . . .

Յիսուս, որ իբրեւ պարտապան Երաշխաւոր եղեւ մարդկային անվճարելի պարտուց՝ կ'ուսուցանէ այս խօսքով որ միշտ աղերս մատուցանեմք իւր գթած Հօր առաջ. « Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց » : Խ՞նչ են մեր պարտիքներ. յանցանք, որով Աստուծոյ սուրբ օրինաց գէմ կամակարութեամբ մեղանչելով՝ պարտապան գըտնուած եմք : Այս խնդրուածոց մէջ անհրաժեշտ պայման մի կայ. թող, կը խնդրենք Հայր, և մեր պարտուց մուրհակներ պատոէ. այլ 'ի զուրէ է այս խնդրուածք, ոչ կը ներէ, ոչ կը թողու և ոչ կը պատոէ մուրհակներն, եթէ մեք նախ մեր ընկերոջ պարտքեր չի թողումք : Այս տեղ հաշիւ մի տեսնալ հարկ է. ո՞րչափ է մեր պարտուց որքանութիւն առ Աստուծ և որչափ մեր ընկերին առ մեզ : Մեր խաճին գիտակցութիւն գիտէ այս և կը վկայէ, թէ մեր պարտք առաւել բազմապատիկ է քան մեր ընկերին : Աւա՛զ մեզ, մոռնալով իրաւունք և դատաստան, առ Աստուծ եղած պարտքեր ժխտելով չենք վըճարեր, խստութեամբ վարուելով մեր ընկերին

հետ, բանտի շղթաներուն մատնելով զինքն կը խեղդեմք չարաչար. մինչեւ չվճարէ մեր պարտուց փոքրիկ պահանջ, աղատութիւն չունի: Նրբ մեք այս դատաստանաւ կը դատեմք մեր ընկեր, մեր յոյս և ակնկալութիւն 'ի դերեւ է, ի՞նչ համարձակութեամբ կարող եմք մեր երկնաւոր Հօրէն ներողութիւն գտնել, երբ յանցաւոր որդիքներս չթողումք նախ ներելով մեր յանցաւոր եղբարց. վասն զի Աստուծած յայնժամ կը ներէ, երբ մարդ մարդոյն ներէ :

ԴԱՍ ԻՇ.

ԵՒ ՄԻՇ ՏԱՆԻՐ ԶՄԵԶ Ի ՓՈՐՁՈՒԹԻՒՆ . . .

Յիսուս Աստուծած ինքնին յաշխարհ եկաւ ու մարդկանց մէջ բնակելով փորձով իսկ տեսաւթէ անջօր և ապիկար մարդիկ կարող չեն աշխարհիս բազմադիմի փորձանաց ալիքներուն գէմ դնել. ուստի կ'ուսուցանէ ամէն ժամու մէջ երկնաւոր Հօր կազդուրիչ օժանդակութիւն զօրավիգ կանչել ու խնդրել միշտ՝ չտալ զմեղ այն փորձանքներուն ձեռք, որում կարող չեմք հանդուրժել կամ անսասան մնալ Յովեայ մեծ նահապետին պէս : Տէր, Հայր մեր, դու գիտես իսկ քու թշուառ զաւակներուդ անհաստատ տը-

կարութիւն, որ իբրեւ խոիւ և փոշի կը տարուրերին թեթեւ հողմերէն անդամ։ ձեռն տուր երկինքէն ու ամէն վերահաս չարիքներէն պատրապարէ անօդնական զաւակներդ ։ չիկայ աշխարհիս վրայ մարդկային ձեռք մի, որ կարենայ զիրենք փրկել. Տէր, դու միայն ձեռն տուր ինչպէս Պետրոսին, մարդիկներէն յոյս չիկայ. վասն զի քոյ է արքայութիւն, քոյ է զօրութիւն, քոյ են երկինք, քոյ է երկիր, քոյ է մարդն, որ զքեզ կ'օրհնէ ու կը փառաւորէ յաւիտեանս յափետենից :

ԴԱՍ ԻՐ.

ԵԹԷ ԹՈՂՈՒՑՈՒՔ ՄԱՐԴԿԱՆ ԶՅԱՆՑԱՆՍ . . .

Որչա՞փ կարեւոր կը դատի ներողութեան դասն, զոր ՀԱՅՐՄԵՐէՆ յետոյ դարձեալ կը կրկնէ Յիսուս և իբրեւ անհրժեշտ պայման մի գնելով կը վերջացնէ այս մեծ պատուէր : Ի՞նչ է այս անդրժելի պայման, զոր Աստուած վճռեց ու կնքեց, ահաւասիկ. «Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և Հայրն երկնաւոր զյանցանս ձեր» և այլն : Այսինքն եթէ դուք ՚ի սրտէ թողուք ձեր եղբօր, ես ալ կը թողում

ձեզ. իսկ եթէ աններող խստասրտութեամբ ձեր համակարիք եղբարց չէք թողուր, ստոյգ և ձըշմարիտ այժմէն կըսեմ ձեզ, բնաւ մի՛ ակնկալէք, մի՛ յուսաք, թէ ձեր երկնաւոր Հօրէն ներողութիւն կը գտնէք. առանց ներելոյ՝ ներողութիւն չիկայ : Պետրոս հարցուց Յիսուսին . Տէր, ասաց, քանիցց անդամ պէտք է ներեմ մեղուցեալ եղբօրն . մինչեւ եօթն անդամ : Յիսուս պատասխանեց, ես չասացի քեզ թէ եօթն անդամ, այլ եօթանասնիցս եօթն : Պէտք չէ այնպէս հասկնամք որ Յիսուս այս որոշեալ թուով ներողութեան չափ ու ասհմանը կը դնէ : Ոչ, այլ բացարձակ կը հրամայէ, որ մեք մեր եղբօր անսահմանաբար ներեմք թէ և մի աւուր մէջ եօթանասնիցս եօթն անդամ մեղանչէ մեր դէմ : Մարդիկ քանի որ այս աշխարհիս վերայ ընկերական կեանքով կապուած են իրարու հետ, անհնարինէ, որ նոքա ընկերական յարաբերութեանց մէջ իրարու դէմ չմեղանչեն : Ուստի խաղաղութեան հրեշտակ Յիսուսը ներողութեան անսահման օրէնքը կը հաստատէ, որպէս զի մշտնջենաւոր խաղաղութիւն պահէ իւր հաւատացեալ եղբարց մէջ :

ԵՒ ՅՈՐԺԱՄ ՊԱՀԻՑՔ . . .

Յիսուս աղօթից դասին հետ նոյն զգուշութեամբ կ'աւանդէ և պահեցողութեան դասն, բոլորին տարբեր դպրաց ու փարիսեցւոց մարդահաճոյ կերպերէն. որք միայն վերին երեսով կը կեղծաւորէին մարդկանց առաջ իրեւ խիստ պահեցող, որբակաց, ժուժկալասէր և պարկեցու:

Աստուած, որ արտաքին պահեցողութեան հետ, հոգւոյ և սրտի սրբութիւնն ալ ՚ի միասին կը պահանջէ, երբեմն Եսայիաս մարդարէին բերնով այսպէս կը կշտամբէր Յակովայ ազգի կեղծաւորութեան անօրէնութիւն, մինչդեռ Խորայէլի ազգն ինքնին կը սրտմտէր թէ ինչո՞ւ համար իւր պահքն Աստուած չի տեսնար. «զի՞ է, զի պահեցաք մեք և դու ոչ գիտացեր»: Այո՛, բնաւ չուզեր Աստուած տեսնալ այնպիսի պահք, երբ մարդիկներ կը տեսնան. Աստուած չի նկատեր արտաքին խոնարհութեան կեղծաւոր ձեւեր, երբ ներքուստ սիրտն ամբարտաւանութեամբ լցուած է. երբ սրտին գաղտնի պահած անիրաւութեան վճիռն չի քակեր. երբ վաճառաշհութեան մէջ խարդախութիւն կը գործէ ՚ի վնաս ընկերին. երբ կը կոփէ դանաւագն և

կը հարստահարէ. երբ աղքատին ողորմադէմ ժտանաց ձայն չի լսեր. երբ մատնուած հարահատ տնանկն մեղաւորին ձեռքէն չի փրկեր. երբ այրին և որդն գատաստանի ատենէն մերժելով իւր իրաւունքէն կը զրկէ. երբ իրեւ փարիսեցի Աստուածոյ տաձարին մէջ պարծենալով կը մեծամոի իւր պահեցողութեան վրայ. երբ աղօթելոյն ժամ իւր ընկեր մաքսաւորն՝ մեղաւոր կը գատի: Այս կերպն էր ահա փարիսեցւոց կրօնապաշտութեան հանդէս. զոր խոտելով կը կշտամբէ Յիսուս՝ կեղծաւոր, կոյր և յիմար կոչելով զիրենք. որք բռեալ գերեզմանի նման միայն արտաքուստ սուրբ կերեւային մարդոց առաջ, իսկ իրենց ներքին սիրտ ու հոգին ապականուած էր մեռելոտի ոսկորներով՝ որ է հնացեալ չարութեամբ:

Ո՞րն է ապա Աստուածոյ համելի և ընդունակ պահքն. այս դարձեալ նոյն մարդարէն կ'ուսուցանէ. «Թո՛ղ և արձակէ նեղեալներն, անիրաւութեան մուրհակներ պատռէ. քաղցեալներուն առատութեամբ բրդէ ու բաշխէ քո հացն. անյարկ աղքատներ պատսպարէ տունիդ մէջ. մերկանդամ ընկերդ հանդերձով ծածկէ: » Ճշմարիտ պահոց եղանակին մէջ՝ Յիսուս կը պատուիրէ թէ քուրձ և մոխիր պէտք չեն խրայէլի որդւոց

պէս, հապա օծել գլուխ, լուանալ երես, մարդկանց առաջ չմիթայնել դէմք սեւ ատելըւթեամբ, այլ պայցծառ ու զուարթամիտ երեւիլ սիրոյ ժըպիտներով. աներեւոյթ սրտիդ սուգ և աշրտմութիւն թող միայն Տէր տեսնայ ՚ի ծածուկ, ու տայ քեզ յայտնապէս ինչ որ քո զգուշաւոր առաքինութեանդ վարձքն է :

Այս պարզ և անկեղծաւոր շաւզն հեռի էր բնաւ փարիսեցւոց ճանապարհ. որք խոժու դէմքով, տխուր ու ծանր կերպարանքով իբրեւ խստագոյն պահեցող կը ճեւանային միամիտ ժողովրդոց առաջ. իրենց այս շինծու կերպին մէջ իսկի չը նշարուեր սրտի կատարեալ զղումն. ոչ Աւետարանին ուսուցած հոգւոյ հեղութիւն և ոչ եւս եղայրսիրութեան քաղցր ներողութիւն. վասն զի փարիսեցիք առաւել դատող էին քան թէ ներող :

ԴԱՍ 1.

ՄԻ՛ ԳԱՆՁԵՔ ԶԵԶ ԳԱՆՁՍ ՅԵՐԿՐԻ . . .

Թիսուս, որ երկնից մեծութեան տէր և միտներ ամայն գանձապետն էր՝ իւր Աւետարանի աշխարհաց նորալուր դաս մի կ'աւանդէ, որ բացէ ՚ի բաց հակառակ է աշխարհիս փարթամ-

ներուն : « Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի ». այսինքն անապահով և միշտ կասկածելի երկրին վրայ գանձ չի պահել. ուր թէ ոսկի է՝ բռնականներ կը յափշտակեն, թէ գեղեցիկ կալուածէ՝ Աքաարի և Յեղարէլի պէս ամբարիչո անիրաւներն. թէ հանդերձ է՝ կ'ուտտեն և կը մաշեն ցեցերն, թէ թագ է՝ կը գլորի, թէ գահ է՝ կը կործանի, թէ վայելչութիւն է՝ կ'անցանի, թէ որդիքներ են՝ կը մեռանին : Եթէ մեր դիզած գանձերուն աշխարհս հաւատարիմ աւանդապահ չէ, հապա ո՞ւր տեղ կայ անկասկած ապահովութիւն, որ անկորուստ կը մնայ : Սահուն երկրիս վրայ տեղ մի՛ որոներ. երկինքն է միայն այդ քո վնասած ապահով տեղ. Յիսուս պատրաստեց զայն իրեւ գանձարան իւր սիրելեաց համար. որոց յոյս Աստուած և երկինքն է. ուր ոչ աշխարհիս բռնակալներուն ձեռք կը հասնի և ոչ եւս ական հատանող գողին հնարք կը զօրէ, Մինչեւ ՚ի Քրիստոս աշխարհիս մոլորեալ որդիքներն կը կարծէին թէ իրենց դիզած գանձ, մեծութիւն և կեանք ապահով է երկրիս վրայ, որ իրեւ գողագարան տեղ մի է : Այս անկայուն և տաժանելի ծովուն մէջ չարաչար աշխատեցին. բոլոր իրենց վաստակ և ճոխութիւն այն ինչ նաւերու բեռնաւորելով ապա՛ով նպահանդիստ

մի հանել կ'ուզէին , բայց ընդունայն էր միշտ իրենց ջանք և վաստակ , սկսեցին Պետրոսին պէս գանգատել . «Տէր , զամենայն գիշեր աշխատեցաք և ոչ ինչ կալաք : Տէր , ձեռն առուր մեզ ու փրկէ այս ամենի ալիքներէն . մեր գանձին հետ , ահաւասիկ մեր անձն եւս կը կորնչի : »

Ստոյգ , խաւարին հեթանոսութեան ծովուն մէջ բան մի չի կարողացան ըմբռնել Ադամոյ ողորմելի որդիք՝ չարավաստակ աշխատելով կեանքի նաւարկութեան մէջ , մինչեւ եկաւ Հօր Աստուծոյ իմաստուն որսորդն՝ սորվեցոյց մեր աշխատութեան ուռկան յաջակողմ ձգել այսինքն թող տալ աշխարհ և իւր ամէն երազացոյս անկայուն բարիքներ , վերին երկնից համար խորհել , ինչպէս կը յորդորէ երկնաքաղաքացին Պօղոս : Ի զուր կ'աշխատիմք . աշխարհիս ձախակողմն ունայն է , բան մի կարող չեմք ըմբռնել , ընդ վայր կը տառապիմք ուրեմն , մեր կեանք մաշեցաւ , մեր մարմնոյն ուռկաններուն հիւսուած կը քայքայուի օր ըստ օրէ ծերութեամբ , բաւական է , թող տանք այս նանրավաստակ աշխատութիւն . Յիսուսի հրամանին հնազանդելով՝ այսուհետեւ մեր ուռկան միշտ յաջակողմ ձգենք . և ինչ որ կարող եմք ըմբռնել՝ զայն վաղվաղակի փոխագրենք երկնից գանձարանին

մէջ . Զվշատինք բնաւ թէ երկինք մեր ստոր վիճակէն անհուն հեռաւորութեամբ բարձր է , ո՞վ կարող է իւր գանձ դիւրութեամբ փոխադրել անդ :

Այլ մի՛ վարանիք , ո՛վ դուք , որ ձեր գանձ երկինք հանել կ'ուզէք . ահա պատրաստ կան բեռնատար աղքատներ , ահա պատրաստ նըստեր կ'սպասեն աշխարհիս մեծատանց դուռներուն առաջ . ամէն հրապարակներու մէջ լի են անհամար վշտակիր Ղազարոսներ : Մի՛ կասկածիք , Աստուծոյ հաւատարիմ մշակներն են նոքա . տուէք ձեր գանձերու բեռներն , թող տանեն երկինք . ուր անկորուստ պահելով կը յանձնեն ձեզ այն օր յորում Տէրն՝ ձեր ողորմութեան նըստէր ձեզ յուշ բերելով կը յիշատակէ մեծ գոհունակութեամբ . «Որովհետեւ արարիք միում 'ի փոքրիանց յայսցանէ , ինձ արարիք : »

ԴԱՍ ԼԱ.

ՃՐԱԳ ՄԱՐՄՆՈՅ ԱԿՆ Է . . .

Նախասացեալ Աւետարանի պատուիրանաց ուղիղ ձանապարհի մէջ անխոտոր քալելու համար աչք և լոյս պէտք է . այս լոյս արեւուն լոյս չէ , այլ Աւետարանին , որ կը լուսաւորէ այն ա-

մէն մարդիկ, որ յախսարհ պիտի դան . ուստի
կը խօսի թիսուս . « Ճրագ մարմնոյ ակն է , եթէ
ակն քո առատ է , ամենայն մարմինդ լուսաւոր
եղիցի » և այն : Այնչափ ձմարիտ է այս օրի-
նակն , որ մարդ կարող չէ ժխտել . դուրսէն
կամ հեռաւոր առարկաներէն չի բերեր , այլ նոյն
խակ մարդոյ անձնէն կը ցուցնէ . ուսմիկն և ի-
մաստուն դիտեն փորձով թէ աչք մարմնոյ ձը-
րագն է . երբ լցոն առատ է՝ բոլոր մարմնն
լուսաւոր կը դառնայ . խակ երբ վաստակեռ է ,
թշուառ է մարդ խւր բոլոր կեանքին մէջ , խար-
խափելով կը շրջի և կը գործէ կոյրղլուրայն ա-
ռանց ընտրութեան , որով կը զրկուի կատարեալ
կեանքէն , զոր կը վարեն ակնառողջ մարդիկ :
Եթէ աշխարհիս մականացու կեանքին համար
այսքան պիտանի է մարմնոյ աչք , հապա հոգւոյ
յաւիտենական կեանքին համար որչա՞փ կարե-
ւոր է բանին մուաւորական աչք . որ մոլեկո-
նութեան խաւարին մէջ խսպառ կուրացեր էր ,
երկինք չէր տեսներ , երկրիս վրայ մոլորեալ կը
շրջէր Տիսու Յիսուս ու հարցուց , ի՞նչ կը խընդ-
րես , թշուառ կոյր : Տէ՛ր , ուրիշ ոչ ինչ չեմ
խնդրեր , միայն լցոն կը խնդրեմ . հրաման արա ,
թող աչքս բացուի , տեսնամ երկինք ու աշխարհ
և պաշտեմ նոյա Արարչագործն : Յիսուս ինչ-

պէս մարմնոյ աչք՝ նոյնպէս մեր հոգւոյ կուրու-
թիւն նոր լուսաւորէց իւր Աւետարանին լուսով ,
Քրիստոսի բան ճրագ է . Դաւիթ այս ճրագին
լուսով կը քալէր ու կ'ըսէր . « Ճրագ են բանք
քո ոտից իմոց և լցոն տան շաւղաց իմոց » : Ով
որ այս լցոն չունի՝ մահուան խաւարին մէջ կը
ննջէ : Այս լցոն սքանչելի է . աշխարհիս արեւուն
պէս միայն տիեզերք չի լուսաւորէր , այլ թա-
փանցելով մեր ներքին մարդն՝ հոգին , սիրու
և խիզճ առհասարակ կը լուսաւորէ : Աստուած
այս արև նոր արարչագործեց հոգւոյ աշխարհին
համար . հաստատեց զայն եկեղեցւոյ կամարին
վրայ , որուն լուսով կը շրջին ձըշմարտութեան
որդիքներն :

ԴԱՄ ԼԲ.

ՈՉ ՈԲ ԿԱՐԵ ԵՐԿՈՒՅ ՏԵՐԱՆՅ ԾԱՌԱՅԵԼ .

Յիսուս իւր Աւետարանին հետեւով ազատա-
գիր աշակերտաց կ'ուստոցանէ երկու տերանց
ըս ծառայել . այսինքն Աստուածոյ և մամոնային :
Տէր՝ աշխարհիս համայն վարթ ամութիւն , և սուտ
կրօնի պաշտօն՝ մէկ բառով՝ մամոնայ կը կոչէ .
որոց ծառայեցին մարդիկ իւրեանց մոլորամը-
տութեամբ , մինչեւ իջաւ երկնից Քորերէն յաշ-

Խարհս նոր Մովկէս և նոր փրկիչ . որ հին Մովկիսին ալէս չէ թէ միայն փոքր ժողովութղ մի ազատեց Փարաւոնի գերութեան մէջ տանջող կաւագործութենէն , այլ բովանդակ աշխարհը փրկեց հեթանոսութեան սուր կրօնին ծառայեցուցիչ փրկութենէն . ինքնին առաջնորդեց տարաւ զիրենք մինչեւ երկինք : Յիսուսի այս փրկութիւն Մովկիսն գերազանց է . ուստի խընարով կը պատուիրէ իւր ազատեալ նոր ժողովը ոց այլ եւս չի ծառայել հեթանոսական սուր կրօնին , կամ աշխարհիս Փարթամութեան մամնային : Երկնից Հայրն է միայն ձեր Աստուած և Տէր . թող տուէք ձեռագործներն , որ մարդկային մոլորամութեան չարարուեստ գիւտն է . ճանչցէք ու պաշտեցէք միայն երկնից Աստուած , որ ձեր բարերար և ճշմարիտ Հայրն է : Ձեր սիրտն Աստուծոյ տուէք , մի՛ նուիրէք անիրաւ մամոնային . թողէք , բաւական է , մինչեւ ցարդանմութեամբ ծառայեցիք ընդունայնութեան , աշխարհի մեծութեան , աշխարհի փառաց , աշխարհի սակւոյն . թողէք այսուհետեւ այդ նիւթապաշտութեան կրօն : Դուք մարդ էք , դուք Աստուծոյ պատկերն էք , ձեր տիրական հոգին վեհ է , մի՛ նուաստացնէք ոչնչութիւն պաշտելով : Այդպիսի կեանք մարմնոյ ցանկութեան ու-

նայնասէր հաճոյքներն են . դուք հոգի էք , հոգւոյ կեանք վարեցէք . թող տուէք այսուհետեւ մարմնոյ կեանք որ հեթանոսներուն համար է միայն , թող պաշտեն ու ծառայեն մամնային , ու մարմնոյ ցանկութեան :

Դ.Ռ. 19.

ՄԻ՛ ՀՈԳԱՅՔ ՎԱՍՆ ՈԳԻՈՅ ԶԵՐՈՅ . . .

Յիսուս այն ինչ կը տեսնայ Հօր Աստուծոյ խեղճ զաւակներն , որ աշխարհիս մէջ հացի և հանդերձի համար չարաչար զբաղմանց և սըրտամաշ հոգածութեան մէջ կը տառապին տիւ և գիշեր , կ'ուսուցանէ որ այսուհետեւ անցոյս թերահաւատութեամբ չի հոգան , ոչ հացի համար , ոչ հանդերձի համար , ոչ տունի և ոչ շտեմարանի համար . այդ ամէն երկնաւոր Հօր սիրոյ պարտքն է՝ կը պատրաստէ ձեզ համար : Նա կը լսէ առիւծի կորեան մանչիւն խոր անտառի մէջն . նա ձկներ կը կերակրէ ծովու խորութեան մէջ . նա թուչուններ կը խնամէ իրենց բունին մէջ : Մի՛ կարծէք թէ որսորդն , որ կը զարնէ ճնճղուկ և իւր ձագեր վար կը ձգէ՝ զանիսուլ է . ո՛չ , առանց Հօր Աստուծոյ գիսութեան՝ թըռչուն մի գետին չլինար : Ո՛վ ապուշ մարդիկ , զար-

մացէք ձեր Հօր նախախնտմութեան վրայ . Եթէ ձնդկան ձագերու հնդին արժէք երկու դանկէ Աստուած զայն չի մոռնար , միթէ զձեզ կը մոռնայ , ո՞վ պակասամիտ թերեհաւատներ . դուք , որ թռչնոց անասնոց վրայ տիրապետող իշխան էք . Գողդոթայի նոր խորանին առաջ անարատ գոհին արեան մէջ թաթաւելով յազատութիւն թռչող նուիրական հաւն էք : Տեսէք դաշտի ինքնաբոյս ծաղիկներն . ո՞վէ որ կը գարմանէ զայնա . ո՞ր ձեռքն է որ կարմիր , կապոյտ , ծիրանի և գեղին գոյներով կը զարդարէ զանոնք . ո՞վ կը յօրինէ նոցա վայելչազեղ թեւերուն փետուրներ :

ԴԱՍ ԼԴ.

ՀԱՅԵՑԱՐՈՒՔ Ի ՇՈՒՇԱՆՆ ՎԱՅՐԵՆԻ . . .

Առաւել զարմացէք շուշան ծաղին վրայ , ուրուն գիւրաթառամ փառքն՝ անհամեմատ է : Թողրում աշխարհի այլ և այլ թագաւորաց պերձութիւններն , և ոչ իսկ սոլոմոն իւր արքայական փարթամութեան մէջ կարողացաւ նախանձելի շուշան ծաղիի մի չափ փառք վայելել . ինչ է շուշան . դաշտի մէջ բացուած վայրենի խոտմի , որ այսօր զուարթ է , վաղիւ կը թառամի ,

կը ժողվին մարդիկ ու հնոցին մէջ կը վառեն : Եթէ այս չնչին խոտին բոյս՝ հայր Աստուած մեծ ինամով կը գարմանէ , միթէ զձեզ կը մոռնանայ , ո՞վ թերահաւատ որդիք , դուք , որ Աստուածոյ նմանութեան պատկեր կը կրէք . դուք անեղծ և անմահ հոգի ունիք . դուք եկեղեցւոյ նոր գերդաստանին ընտիր և ընտանի զաւակներն էք : Գուք հոգի էք , մարմնոյ համար մի' հոգայք . ես իսկ եմ ձեր նորաճաշակ կերակուր , կենդանի հաց երկինքէն իջած : Աստուածով յագեցէք , հոգւով զԱստուած զգեցէք . կերակուր կը չքանայ , հանդերձ կը մաշի , ես յաւիտեան կը մնամ : Ուրեմն հաւատացէք ինձ , բնաւ մարմնոյ պիտոյքներու համար չարաչար հոգածութեամբ մի' տատամանիք . թող տուէք այդպիսի հոգերու ծանրաբեռն զբաղմունք , որ մարմնապաշտ կեթանոսներուն է միայն , որոց յօյմն աստիաշխարհն է , որոց կեանք մարմին է , որոց ուրովայն Աստուած է . երկնից մէջ հայր չունին , երկրիս վրայ մարմին , աշխարհ , փառք և մամնայն կը պաշտեն :

ՄԻ ՀՈԳԱՅՔ ՎԱՍԽ ՎԱՂՈՒԻՆ . . .

Այլ ձեղ երանի՛, դուք երկնաւոր Հայր մի ունիք, որուն անուն ես ծանուցի ձեղ. նա գիտէ թէ ինչ պէտք է ձեր սակաւօրեայ կեանքին համար: Ամէն բանէն աւելի և ամէն բանէն յառաջ խնդրեցէք, որ Աստուծոյ արքայութիւն և նորա արդարութիւն տիրէ ձեր վրայ. մարմոյ կենաց այն ամէն պիտոյքներն չափէն աւելի կը տրուի ձեղ՝ մինչեւ ցյագ կերէք ու վայելեցէք կշտափինդ: Վաղուան պարէնի համար հոգալ աւելորդ է. հապա միշտ և առաւել հոգացէք այն անկարծելի չարիքներուն համար, զոր իւրաքանչիւր աւուր արեւ ծագելով իւր հետ կը բերէ: Ով կարէ վշտարեր օրերուն պատահարներ թըռուել, որուն տակ յարաժամ կը հեծեն աշխարհիս թշուառ որդիքներ: Ահա սոյնպիսի գժուարակիր փորձանքներէն ազատ մնալու համար՝ անդադար հոգալ և աղօթել պէտք է:

Աշխարհիս անյագ ցանկութենէն գինովցած խելացնոր ագահներ միշտ ապագայ օրերուն բարեբախտութեան կը յուսան, միշտ երջանկու-

թիւն կ'երազեն. այն անմիտ մեծատան պէս հին շտեմարաններ քակելով՝ նոր և մեծամեծներ չինելու պատրաստութիւն կը տեսնեն՝ չյիշելով բնաւ թէ Աստուծած է իրենց հոգիներուն և անձանց տէր. յանկարծ գիշերուան պահու մէջ իւր աւանդ կը պահանջէ և իւր ձեռաց ահաւոր մանդաղով կը քաղէ նոցա հոգիներ: Այս անմիտներուն պատրաստած մեծութիւններն որո՞ց կը մնան. իրենցմէ առաւել անմիտ են իւրեանց ժառանգներ եթէ կը կարծեն թէ իրենց հօրերուն ագահութեան կըզկանքներ իրենց կը մընայ: Աչ բնաւ. աշխարհին՝ աշխարհ կը մնայ. մարդ կարող չէ աշխարհի ամուր ձեռքէն բան մի խել իւր հետ տանել. ո՛վ որ այս կը խորհի՝ անիրաւ է. մեծութիւն և մատոնայն աշխարհի բաժին է. իսկ մեր բաժին Աստուծած և երկինքն է. « Բաժին իմ ես դու, Տէր » կը վկայէ Դափիթ. առաւել եւս Յիսուս. « Դուք չէք յաշխարհի աստի »: Եթէ աշխարհէն չեմք, ուրեմն աշխարհին՝ մեր չէ. աշխարհին՝ յաշխարհ կը մընայ, Աստուծոյն՝ առ Աստուծած կ'երթայ: Աւետարանին իրաւունք և հրաման այս է. կայսերին՝ կայսեր տալ, և Աստուծոյն՝ Աստուծոյ:

Ապա ուրեմն զուր ջան և ընդունայն վաստակ են մեր ամէն հոգածութիւններ, որ մարմ-

նոյ կեանքին համար է . առաւել եւս պէտք է
հոգւոյն համար հոգանք . « Հոգին է կենդանա-
բար , մարմին ինչ ոչ օգնէ » . ինչ որ Յիսուս կը
խօսի , այն է մեր հոգւոյն կեանք և անմահու-
թիւն :



S E U N H R H H N

ՄԱՏԹԵՈՍԻ Է . ԳԼԽԱՅՆ ՎԵՐԱՅ

—♦♦♦♦—

ԴԱՍ ԼԶ.

ՄԻ' ԴԱՏԵՔ ԶԻ ՄԻ' ԴԱՏԻՑԻՔ . . .

Աստուած Յիսուս դատաւոր արդար , հզօր
ու երկայնամիտ՝ մարմնով աշխարհիս մէջ Խաչի
ներողութեան աթոռին վրայ նասած այս դաս
կ'աւանդէ . « Մի' դատէք , զի մի' դատիցիք » .
և այլն : Ինքն , որ միայն արդար դատաւոր
էր երկնից և երկրիս առաջ , և զոր Հայր սրբեց
ու զրկեց յաշխարհ , երբէք բուռն կամ պատ-
ժող դատաւոր չի հանդիսացաւ իբրեւ աշխար-
հիս աններով ատենակալներն : Իւր կեանք՝ բո-
լորովին ներողութիւն էր , իւր խօսք՝ թողու-
թիւն , իւր ոտք՝ այցելութիւն , իւր ձեռք՝ բը-
ժըշկութիւն , իւր ուսումն՝ հեղութիւն : Նա շը-
նացող կինն արձակեց մինչդեռ յատեան քաշե-
լով դատապարտել կուզէին Փարիսեցի դատա-
ւորներն . նա մեղաւոր կնոջ թողուց՝ երբ 'ի միտս
դատելով կը գայթակլէր Սիմոն . նա մաքսաւո-

րին ներեց . նա խաչականու հայկոյի հներուն համար իւր ջօրէն թողութիւն խնդրեց : Աւետարանին անվախման թագաւորութեան Աթոռ եկեղեցւոյ ատենին մէջ՝ ոչ բանտունի, ոչ զնդան, ոչ գան, ոչ զանազան տանջանաց գործիքներ . այլ իւր վճիւ՝ ներողութիւն է . իւր բանտն՝ ազատութիւն . իւր կապանք՝ արձակումն, իւր պատիժ՝ բարի հատուցումն : Այս ատեան՝ աշխարհի ատենէն տարօրինակ է . բարկութիւն, պատիժ, վրէժինդրութիւն, առ ՚ի մահ դատապարտութիւն, սուր, արիւն չի կայ երրէք . իւր ամէն վճիռներ ներողամիտ գթութեամբ կ'արձանագրուին . բաւական է յանցաւորի սրտի զղջումն ու խոստովանութիւն . վասն զի այս ատենին օրէնսդիր ներող Յիսուսն է, և ոչ Սողոն :

ԴԱՅ ԱՅ .

ԶԻ՞ ՏԵՍԱՆԵՍ ԶՇԻՂ ՅԱԿԱՆ ԵՂԲՈՐ ՔՈ . . .

Ներողութեան գերագոյն վարժապետ՝ սոսկ խօսքով չի աւանդեր այս դաս, այլ իւր հայելի օրինակով . ո՛վ որ տեսնել կ'ուզէ, թող ՚ի Գողդ գոթա երթայ՝ Խաչին հանդէս դիտէ : Տիեզերաց մեծ դատաւորն այժմէն կսպառնայ մեզ, եթէ խստութեամբ դատենք մեր եղբայր, եթէ

առանց քննութեան դատապարտութիւն վըճռենք, եթէ իբրեւ Փարիսեցի՝ գերանակիր աչքով մեր եղբօր աչքին փոքրիկ շիւղ նկատենք, եթէ մեր համըլրակ ընկերին յանցանք չարաչար չափենք, մեք ինքնին զմեզ Աստուծոյ արդարութեան ատենին կը մատնենք . ուր աեղ պիտի երեւայ այն ահաւոր մատն Աստուծոյ տաճարին անօթներ պղծող բռնաւորին չափով, նոյն կը սովոր, նոյն խստութեամբ . վասն զի երկնից ատեան՝ աշխարհիս ատեան չէ, ուր ոսկին և կաշոռ կ'ողոքեն անիրաւ դատաւորին երես, ուր անմեղին համար է զրկանք, կապանք, բանտ և մահ . իսկ յանցաւորին՝ ազատութիւն և կեանք :

Մարդ՝ երբ յանցաւոր է և չքմեզս լինելով ինքնին դատաւոր կը հանդիսանայ իւր ընկերին վրայ, ոչ միայն Յիսուսի ձայն այլ նոյն իսկ իւր խղճի ձայն ներքուստ կը յանդիմանէ զինքն . « Դու ո՛վ խաւարմիտ կոյր դատող, վաշ սրատես աչքիդ . ինչպէ՞ս ատելութեան դիտակով մանր կը նշարես եղբօրդ աչքին մէջ ինկած աննըշան շղիկ, զոր ևս անտեսանելով կը ներեմ . իսկ քո աչքիդ ահագին գերան, որ է ամենամեծ յանցանք, թող տալով իբրեւ կարեկից կեղծաւորաբար կը մատչիս եղբօրդ աչքին շիւղ չօ-

շափել։ Այսպէս չէ, ովկեզծաւոր փարիսեցի, ուղիղ դատաստան տես, դու նախ մտախոհ եղիր ներքին խղճիդ հետ աչքիդ մեծ գերան ՚ի բաց հանել, և ապա այնուհետեւ համարձակութեամբ ձեռնարկէ եղբօրն»։

Աւետարանին այս յանդիմանութեան խրատընդհանուր Քրիստոնէից ընկերութեան համարէ ։ որք առհասարակ մէկ տիրոջ տան մէջ հաւասար ծառայակից եղբայրներ են։ ծառայն միմիայն իւր տիրոջ պատասխանատուէ ։ թէ որ գթէ կտմ անկանի՝ իւր տէր կը տեսնայ և գիտէ ։ կարողէ մրւանգամ ձեռքէն բռնելով՝ վեր հանել զայն։ Եթէ այսպէս, դատաստան միայն տիրոջ իրաւունքն է, թողին համարձակի մեղապարտ ծառայն իւր ընկերակից ծառայն դատել։

Աւետարանին ներողութեան օրէնք միայն մեր չարաչար դատաստան կ'արդելէ ։ այլ մարդկայն ընկերութեան մէջ բարին ու չար որոշելու իրաւացի դատաստան երբէք չի մերժեր, որ մարդոյն տարատ մտաց անբռնադատ իրաւունքն է ։ Ովկարողէ որոշել չարն ու բարին, երբ մարդոյն թիւրատես աչքն շատ անդամ ուղիղն իրբեւ թիւր կը նշմարէ ։ Ցիսուս նշան մի ցոյց կու-

տայ, այն նշանով պէտք է ճանչնանք ու որոշենք. «Ի պողոյ նոյց, ծանիջիք զնոսա»։

ԴԱՅ ԼԲ.

ՄԻ՛ ՏԱՅՔ ԶՄՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՆՅ . . .

Ցիսուս մասնաւորապէս պատուէր կաւանդէ իւր հրաւիրակ աշակերտաց, որք պատրաստուած էին Աւետարանի սեղանոյն սպասաւոր լինել և աշխարհիս քաղցելոց՝ կենաց բանին հաց մատակարարել։ Որոց կուսուցանէ զգուշաւոր տնտեսութեամբ բաշխել։ Աւետարանին սրբութեան հաց անխտրապէս չտալ շուներուն, և ոչ եւս երկնային մարդարիտ՝ խողերուն առաջ ձգել։

Գիտէ՞ք, շուներն և խողերն ովկ են։ Աւետարանին ճշմարտութեան դէմ զինող, Աւետարանին վրկութիւն արհամարհող, Աւետարանին սրբութիւն անարգող աշխարհիս ամբարիշտ անըզգահներն են։ Որք կապակուտոր շուներուն պէս պիտի յարձակին վազեն ձեր վրայ։ հրապարակաց և ատեաններու մէջ մւսնան զայրանան ձեր քարոզութեան դէմ։ կտմ ազտեղասէր խողերու նման իմ պատուական մարդարիտ առուն կոսկելով անարգութեան տիզմերու մէջ ու դարձեալ որպէս կատաղի գաղան վրանիդ յարձակելով՝ պատառեն զձեղ։

Այսպիսի խստասիրտ անզգամաց երեսէն խոյս տուէք . ծածկեցէք ու պահեցէք Աւետարանին սրբութիւն . ձեր ոտքի փոշիներ թօթափելով՝ մի՛ կենաք , չուտով ելք նոցա քաղաքէն : Երբէք պատճառ կամ տեղի մի՛ տաք ձեր առաքելական պաշտօնին մէջ , որ իմ ու Աւետարանիս անուն արհամարհանք և հայհոյութիւն կրէ :

Այս ախական պատուէք նոյն ընդհանուր Քրիստոնէից ընկերութեան եւս կը պատկանի . որպէս զի խոհական խմատութեամբ քաղաքավարելով արտաքին հեթանոսաց հետ , առիթ չի տանք հայհոյելու սուրբ կրօնք և հաւատք :

Յիսուս՝ իւր Աւետարանին ճշմարտութիւն բնաւ չի հրամայեր բռնադատ կերպերով ընդունել տալ . քանզի Աւետարան լցո է . լցմն ինքնին համատարած է , կը ծաւալի և կը թափանցէ ընդունողներուն սիրտ զոր կը պատրաստէ սուրբ Հոգւոյն ընորհք : Որչա՞ի տարբեր էր այս կերպէն՝ կրօնքով ախակաթող աշխարհիս հին բռնակալներուն իշխանական կերպն . որոց կրօնքին համատութիւն , սուր՝ զէնք , արշաւանք , պատերազմ , կոտորած , քաղաքաց կործանումն և այլ այսպիսի բոլոր մարդկութեան թշուառարեր աղէտներ էին : Հին կրօնք մահաշունչ էր . կենաց տեղ՝ մահ կը բուրէր . Աւետարանին ուրա-

խութեան տեղ՝ սուր կը բերէր . լուսոյն տեղ՝ խաւար կ'ածէր . երկնից տեղ՝ գերեզման կը բանար . արքայութեան տեղ՝ դժոխաք կը տանէր . մէկ խօսքով՝ Աստուած չիկար հին կրօնքին մէջ . ուր Աստուած չիկար , այն տեղ մահ կը թագաւորէր , մարդոյն համար ամենայն ինչ մահ էր :

Յիսուս հեղ էր , բռնակալ չէր . իւր սուրբ և ճշմարիտ կրօն՝ քանի մի Գալիլեացի անթոշակ զինուորներուն ձեռքով տարածեց . որոց պատուէր կուտար ոչ եթէ զէնք , այլ և ցուպ անգամ չառնուլ ճանապարհի համար : Այսպէս աննշան ձկնորսներու ձեռքով տիրեց Աւետարան . խեցեղին ամաններու զօրութիւն՝ խօրտակեց զէնքերն ու զրահներն : Աշխարհ զարմացաւ դեռ կը զարմանայ երբ Աւետարան տկարներով յաղթանակեց :

Յիսուս աղքատ էր , աշխարհիս բաներէն բան մի չունէր . այլ իրբեւ մեծահարուստ վաճառական , խանութ մի բացաւ աշխարհիս հրապարակին մէջ , ուր տեղ՝ ի վաճառ հանեց իւր չնաշխարհիկ պատուական մարդարիտ . այս միայն էր նորա երկինքէն բերած անդիւտ վաճառ : Աւետարանի բարձր քարոզութեամբ հրաւիրեց աշխարհիս չորս կողմի մարդիկ . իւր սակարկութեան պայմանն այս էր , ոսկի , արծաթ , ճո-

Խութիւն, իշխանութիւն, գտւազան, թագ և
ոչիսկ աշխարհիս բովանդակ մեծութիւն գին
չէր ուզեր այս մարդարտին. զի մարդարիտն
անգին էր: Ի՞նչ կը պահանջէր ապա մարդարտին
Տէր. կատարեալ հաւատք, սէր և սիրտ, ամէն
բան վաճառել՝ աշխարհ և ինչ որ աշխարհին է,
անձն եւս ուրանալ. ահա այս է մարդարտին
արժանաւոր գնահատութիւն: Դժուարին կը
խնդրէ մարդարտին Տէր. աշխարհիս սակաւա-
ւոր մարդիկներէն են միայն այս վաճառ գնող-
ներն: Այլ մի՛ խուսափիր Աւետարանի ձայնէն.
թող անհնարին չթուի քեզ, դիւրաւ կ'ստանաս
մարդարիտն. միայն հաւատտա, խնդրէ, հայցէ,
բաղսէ. վասն զի ո՛վ որ խնդրէ այս մարդա-
րիտ, նա միայն կ'առնէ. ո՛վ որ հայցէ՝ նա մի-
այն կը գտնէ. ո՛վ որ բաղսէ երկնից ճանապար-
հին դուռն, Յիսուս պատրաստ է, բանալին իւր
ձեռքն է. ահաւասիկ բաց է, մտիր ներս. քանզի
ինքն է դուռն, ինքն է ճանապարհ, ինքն է
ճշմարտութիւն և ինքն է միայն նորոգատուր
կեանք:

ԴԱՍ

ԽՆԴՐԵՑԷՔ ՆԱԽ ԶԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ .
Յիսուս կը սրտացուցանէ Աւետարանի զաւակ-
ներ, որ չերկմտին բնաւ, հաւատով խնդրեն
ինչ որ կը խնդրեն երկնաւոր Հօրէն, հաւատով
ժտեն և ինչ որ կարեւոր և պատշաճն է զայն
խնդրեն: Հացի տեղ՝ քար մի՛ խնդրէք. և ոչ
եւս ձուկին տեղ՝ թիւնաւորով օձ. այսինքն աշ-
խարհիս փարթամութեան գոյքերն և մամոնայն.
որք ձեր ատամունքներ կը փշրեն եթէ ծամէք
և ձեր կեանք կը թիւնաւորեն եթէ ուտէք:
Դուք ո՛վ ապիկար չար և ապուշ հայրեր. դուք,
որ խորագէտ չէք բարւոյն և չարին ընտրու-
թեան մէջ. բայց ձեր բնական գթով կ'ուզէք
բարի բաներ տալ ձեր որդւոց, ոչ հացին տեղ
քար՝ և ոչ ձուկին տեղ օձ կուտաք, թէ և մա-
նուկն իւր տղայամտութեամբ խնդրէ լալով. որ-
չափ եւս առաւել ձեր երկնաւոր հայրն կատար-
եալ պարզեւներ առատ կը բաշխէ իւր որդւոց,
որք խմաստութեամբ կը խնդրեն և առանց թե-
րահաւատելոյ կ'սպասեն:

ԴԱՍԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԶԱՄԵՆԱՅՆ ԶՈՐ ՄԻԱՆԳԱՄ ԿԱՄԻՉԻՔ ԹԵ
ԱՐԱՍՑԵՆ ՁԵԶ ՄԱՐԴԻԿ . . .

Յիսուս Աստուած՝ միայն այն հակիրճ և բը-
նական օրէնք, զոր Աղամայ և հանուր մարդկու-
թեան հոգւոյն և որտին տախտակներու վրայ
քանդակելով անջնջելի դրոշմեր է, նոյն օրէնք
կը կրկնէ իւր Աւետարանին մէջ և գարձեալ կը
դրոշմէ մարդոց սրտին վրայ զոր եղծեր էր ան-
աստուածութեան ամբարիչո ձեռք. « Զամե-
նայն, զոր միանգամ կամիջիք թէ արասցեն ձեզ
մարդիկ, այնպէս արաբէք և դուք նոցա » :

Ահաւասիկ այս է միայն օրինաց բուն ար-
մատն, որուն վրայ հաստատուած են ընդ հա-
նուր պատուիրանաց բոլոր ձիւզերն. այս է օրի-
նաց բուն աղբիւրին ակն, յորմէ կը բղխին աստ-
ուածադիր պատուիրանաց զանազան վտակներն :
Սոյն օրինաց սքանչելի հակիրճ բան՝ մէկ լեզուով
գրուած չէ. ամէն ազգ և ազինք կարող են կար-
դալ զայն՝ հաւատացեալ և հեթանոս, Եթովպա-
ցին, Արաբացին, Ասիացին, Եւրոպացին. նաև
խուժ դուժ Ակիւթացին : Այս օրէնք թուզմէի
վրայ չէ, այլ սրտին և հոգւոյն մէջն է. ամէն
հասակի մարդիկ գիտեն զայն, թագաւոր, իշխան,

տէր, ծառայ, այր, կին, գեղացին, քաղաքա-
ցին, ռամիկ, իմաստուն, վարժապետ, աշա-
կերտ : Մայր է այս օրէնք, որ կը ծնանի պարտք
և իրաւունք . որով միայն կ'ամրապնդի մարդ-
կային ընկերութեան կապն : Այս կապն է որ կը
կապէ թագաւորն՝ հպատակներու հետ, իշխան՝
ժողովուրդին հետ, տէր՝ ծառային հետ, ամսւ-
սին՝ ամուսնոյն հետ, ծնողք՝ զաւակաց հետ,
հարուստն՝ աղքատին հետ, տկարն՝ զօրաւորին
հետ, իմաստուն՝ ռամիկն հետ, գեղացին՝ քա-
ղաքացւոյն հետ, ազդ՝ ազգի հետ, աշխարհ՝
աշխարհի հետ : Սրբապիղծ է այն ձեռք, որ այս
կապ կը խզէ . սուրբ է այն ձեռք՝ որ զայն
կ'ամրապնդէ :

Մարդկային ընկերութեան պարտք և իրա-
ւունք փոխագարձ առաքինութիւն է . ինչ չա-
փով որ կուտայ, նոյն չափով կը պահանջէ Աւե-
տարանին արդարութեան կը իւ : Աւրեմն, ո՛վ
գու, ի՞նչ կը կամիս, որ ընկերդ քեզ ընէ . եթէ
սէր՝ սիրէ գու եւս, եթէ պատիւ՝ պատոէ դու
եւս . ընկերէն սէր և պատիւ պահանջել քո ի-
րաւունքն է, այլ սիրել ընկեր ու պատուել քո
պարտքն է . առանց այս փոխարինութեան մեծ
անիրաւութիւն է ընկերէն յարդանք պահանջել :
Ով է այն մարդ, որ սիրել չգիտէ՝ սիրուիլ կ'ուզէ.

որ բարեբարել չգիտէ , երախտագիտութիւն կը պահանջէ . որ անողորմ է , ողորմութիւն կը խնդրէ : Այդ անփոխաղարձ իրաւունք , որ միշտ առնել գիտէ առանց տալու , այդ աշխարհիս բռնակալաց ու զօրաւորաց իրաւունքն է . որք առ ոտն կոփելով Աստուծոյ և նոյն իսկ բնութեան օրէնք , « Եւ օրէնսդրութիւն՝ բռնութիւն մեր եղիցի » ըսելով , առ հասարակ կը հարստահարեն աղքատն ու անզօր : Այո՛ , բազէն ձնձզուկներ կը վանէ . նկուն թռչնիկներ միշտ իւր որսիկն են . նմանաւոէս ծովու մանրիկ ձուկեր՝ դլիին ձկան : Նախախնամութիւն սոցա համար այսպէս է սահմաներ . բայց մարդկային ընկերութեան համար արդարութիւն է դրեր . արդարութիւն բնաւ իւր ընկերին վեսս չի կամիր . արդարութիւն՝ հացն իւր ճակտին քըրտինքով կ'ուտէ . արդարութիւն ինչ որ պարտք ունի կը վճարէ ընկերին . արդարութիւն ինչքան իրաւունք ունի՝ այնքան կը պահանջէ . արդարութիւն իւր և ընկերին իրաւունք հաւասար կը կըռէ , անիրաւ զրկանաց կողմն երբէք չի հակամիտեր : Մէկ խօսքով՝ արդարութիւն պարտուց և իրաւանց դատաւորն է . ամբարիշտ անիրաւուներուն պէս ոչ թիւր խորհուրդներ կը բռնդունի , ոչ ժամատ աթոռներու վրայ կը նստի .

իւր կամք միշտ Աստուծոյ օրէնքն է . իւր վը-ձիո՞ իւր խղճին ձայնն է : Նա չի մոռնար , այլ կը կարդայ ամէն պահու մէջ . « Զամենայն զոր լինչ կամիջիք , թէ արասցեն ձեզ մարդիկ , այն-պէս արարէք և դուք նոցա » : Ա՞ն , մարդիկ , եթէ չը եղջէք այս օրէնք , եթէ չխեղդէք ձեր խղճին այս մշտաբարբառ ձայն , բաւ և շատ է Աւետարանին այս միմիայն պատուէր բոլոր մարդկային ազգ երջանիկ կեանքի մէջ պահել , ամէն զրկանք և թշուառութիւն բառնալ աշխարհիս երեսէն :

Այս է ահա Յիսուսին քարոզած բնական օրէնքին զօրութիւն . որուն լայնածաւալ իմաստից տառերէն , փոքրիկ նշանախեց մի հազիւնշանակեցի աստ :

ԴԱՍ ԽՈ .

ՆԵՐ Է ԴՈՒՌՆ ԵՒ ԱՆՁՈՒԿ ՃԱՆԱՊԱՐՀՆ . . .

Յիսուս , որ երկնից արդարութիւն էր , երկրիս մէջ երեւեցաւ . Աստուծած մարդոց մէջ մտաւ մինչդեռ մարդիկ մոլորուած կը թափառէին , աշխարհիս բազմաստուածութեան ճանապարհին վրայ՝ ցիր ու ցան եղած անհովիւ ոչխարներու պէս . փոխանակ երկնից հայրենիք

Դիմելու՝ սատանայի աքսորանաց յաշխարհ կ'երթային. Յիսուս միայն դարձուց այդ մարդիկ դէպ ՚ի երկնից ճանապարհ, որուն համար կը պաղատէր Դաւիթ. « Յոյց ինձ ճանապարհ յոր և գնացից » : Այս նոր ճանապարհին ուղեցոյց առաջնորդ Յիսուսն էր, ուստի կը քարոզէ. « Նեղ է դուռն և անձուկ ճանապարհն, որ տանի ՚ի կեանս » . և որպէս զի մարդիկ չխուսափին այս դժուարին բանէն, նախ ինքն մտաւ աշխարհիս անձուկ ճանապարհի դռնէն : Ո՞ւր տեղէն, Բէթլէհէմի այրէն, յանբանից մսրէն մինչեւ Գողգոթային գլուխ, մինչեւ գերեզմանին դուռն. երեք տարուան միջոց տաժանելի խաչակրութեամբ հորդեց բացաւ այս ուղին երկրէս մինչեւ երկինք, խոր դժողքէն մինչեւ վերին արքայութիւն : Ինքն ինչ որ կրեց այս ճանապարհն մէջ, հալածանք, վիշտ, աղքաստութիւն, քաղց, ծարաւ, ապերախտութիւն, մասնութիւն, կապանք, բանտ, նախատինք, ճաղանք, թուք, ապտակ, հարուած, ՚ի վերջոյ խաչ և մահ :

Յիսուսին համար այս էր ահա նեղ դուռն և անձուկ ճանապարհ : Հապա մեր՝ ո՞րն է, մեք ո՞վ ենք . նոյն խաչակիր զօրապետի դրօշակին տակ զինուորող բանակն ենք . այս բանակին անուն Քրիստոնեայ կը կոչուի որ Քրիստոսի հե-

տեւող կը նշանակէ : Սուրբն Պօղոս խրախոյս կուտայ եկեղեցւոյ զինուորներուն . « Հայեցարուք ՚ի զօրագլուխն հաւատոյ . . . որ փոխանակ միսիթարութեան, որ նմա առաջի կայր՝ յանձն էառ զիսաչ, արհամարհեաց զամօթ . . . » : Ամէն զինուոր իւր զօրապետին հրամանակատարն է . եթէ մեր Զօրագլուխն՝ խաչի և Գողգոթայի ճանապարհէն երկինք գնաց, իւր զինուորներն եւս ուխտադիր են նոյն խաչակրութեան ճանապարհէն երթալ : Աստուած անպարտ մարդոյն սիրով վառեալ, կամակար ոգւով կրեց խաչին անարգանք . ո՞վ է մարդ, մեղապարտ ծառայ, հող ու մոխիր, և որդն չնչին . միթէ իրաւո՞նք ունի՝ ամօթ կամ անարգանք համարել իւր նուաստ անձին՝ կրել աշխարհիս մէջ այն ամէն խաչեր, ինչ որ իւր Տէր կրեց : Բնաւթող չի յուսայ մարդ . մոլորաշաւիդ աշխարհիս վրայ չկայ ուրիշ ճանապարհ մի երկինք գնալու, բաց ՚ի Յիսուսի բացած ճանապարհէն :

Այո՛, այս անձուկ անցքէն ՚ի զատ կայ ուրիշ ընդարձակ պողոսայ մի՝ աշխարհիս դէպ ՚ի ճախակողմ կոյս . զոր ՚ի սկզբանէ անտի խաւառակէր իշխան բացեր է դէպ ՚ի կորստեան անրասէր իշխան բացեր է դէպ ՚ի կորստեան անդունդ : Աւա՛ղ, որչա՞փ բազմապատիկ են այս համարձակ ճամբառուն ուղեւորներն . ահա բանակ-

ներով կը դիմեն փառասէր բռնակալներ, աղքատին վրայ տիրապետող ամբարիչտ իշխաններ, տկարին և անզօրին իրաւունք յափշտակող հարատահարիչ զրկողներ, բազմախորտիկ մեղանին վրայ միշտ յզիփացող՝ կարօտ Նազարոսին վշրանք զլացող քարապիտ մեծատուններ, ոսկին իբրեւ Աստուած պաշտող աշխարհիս ընչաքալց առահներ, փոքրիկ կարծուած Աստուծոյ սիրելեաց վրայ հպարտացող գոռոզներ, ընկերոջ համբաւոյն ու մեծութեան դէմ մախացող՝ հին եղբայրապան Կայենին նախանձոտ եղբայրներ, ջրհեղեղի դարսուն մարդոց պէս ուտող և ընալող անսուակ շրւայտութեամբ կեանք վարող քաղաքացիներ։ Մէկ խօսքով, աշխարհիս բոլոր օրինազանց անզգամներ, որք կամ խսպառ ուրացան անհաւատութեամբ թէ Աստուած չիկայ, կամ ճանչցան Աստուած ու հաւատացին նորա միաձին Որդւոյն, մկրտութեան սուրբ կնքով Քրիստոնեայ գրոշմեցին իրենց անուն։ Տէր, Տէր, կանչեցին, բայց Տիրոջ սուրբ պատուէրներն չի պահեցին։ Քրիստոնէութեան անարատ կրօնքին մէջ՝ դարձեալ նոյն հեթանոսութեան զեղծ ու անսուակ կեանք վարելով՝ մինչեւ ցվախման մնացին անզեղջ. առ երեսս Քրիստոնեայ անուն առին, գործքով հեթանոս մեռան։

Սոյնպիսի յիմար և ապերախտ որդիքներ խաչին փրկութիւն և Աւետարանին սիրոյ օրէնք մերժելով, աշխարհիս վրայ ընտրեցին ու գնացին այն ճանապարհ, որուն երջանկութիւն կարծուած երկրաւոր կեանք մինչեւ գերեզմանին դուռն էր։ Անհաւատութիւն ու մեծութեան պատրանք պաշարեց նոցա խելացնոր միտք, չի կրցան ուղիղ տեսութեամբ համեմատել այս երկու ճանապարհաց վախճան։ Այն ինչ մէկին մէջ խաչակիր ուղեւորն, որ թէպէտ ծանրութեան տակ շունչ բերան հասած պարտասելով կը հեծէր, բայց իւր վշտատար քայլեր մինչեւ գերեզմանին իջեւան կանգ կ'առնէին. այնուհետեւ մահուան մէջ նոր կեանք գտնելով երկնից մշտնջենաւոր հանդիսատ կը ժամանէր հոգին։ Խակ միւսին մէջ անխաչաբարձ ուղեւորն որուն բեռն միայն աշխարհի մեծութիւն էր, մինչդեռ կառքին մէջ նստած կ'արշաւէր, կ'անցնէր ընդարձակ պողոտաներէն, կը խորհէր ինչ որ իւր մարմնոյ հաճոյքն է. շուեմարան կը պատրաստէր՝ կարծելով թէ ինքն յաւիտենական աշխարհաքաղաքացի է. և ահա կէս գիշերուան պահուն կառքին անիւ կը գլորուէր մահուն գուր. այն տեղ կը բացուէր կուրցած հոգւոյն աչք, ամենայն ինչ ունայնութիւն կը տեսներ,

ոչ պալստ , ոչ փառք , ոչ մեծամեծ շոեմարան ,
ոչ բազմապատիկ տոհմականք , անցան գնացին
այս ամէն վայելքներ . նոցա տեղ թշուառագոյն
վիճակ յաջորդեց գեհենին կրակ , և մահուան
մէջ՝ դարձեալ նոր մահ մի դուաւ :

ԴԱՍ ԽԲ.

ԶԳՈՅԵ ՀԵՐՈՒԹ Ի ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԵՒՅ ...

Յիսուս այս կորստեան դուռն կը փակէ և Ա-
ւետարանին որդւոց դէմ կը խցէ լսյն ճանա-
պարհին անցք . այլ իրմէն յառաջ և յետոյ շատ
անդամ սուտ մարդարէներ կը յառնէին ժողո-
վըրդոց մէջ , որոց դործն էր խորամանկութեամբ
իրեւ Աստուծոյ մարդարէ ձեւանալով՝ ճշմար-
տութիւն միշտ խեղաթիւրել . ինչ որ Աստուծոյ
կողմէն ճշմարիտ մարդարէներ կը քարոզէին ,
նոքա ժողովրդոց միտք յուղղութենէն հանելով՝
ընդհակառակն կը համոզէին : Փարիսեցւոց պէս
խիստ վարժ էին կեղծաւորութեան մէջ . քաջ
գիտէին ոչսարի մոլթով արտաքուստ պատել
զիրենք , իսկ ՚ի ներքուստ սուր ժանիքներով
ժողովսւրդ պատառել : Եկեղեցւոյ պարզամիտ
գառներ այսպիսի դարանամուտ դաշնաներէն
աղատ պահելու համար՝ քաջ հովիւ Յիսուս նա-

խատեսելով ազդ կ'առնէ . « Զգոյշ էրուք ՚ի
սուտ մարդարէից , որք գան առ ձեզ հանդեր-
ձիւք ոչխարաց » : Այսպիսի գառնազգեստ գայ-
լեր ճանչնալու համար՝ ահաւասիկ ձեզ այժմէն
նշան կուտամ : Այդ ինքնակոչ մշակներ , եկե-
ղեցւոյ դրախտին չարարմատ ծառերն են , զոր
ես չեմ անկեր , այլ ստախօս բանսարկուն որ ի-
րենց հայրն է . դոքա թէպէտ ամէն հնարքով
կ'ուզեն իրենց ստութիւն՝ ճշմարտութեան կե-
ղեւներով պատրուակել , բայց անհնար է . « Ձի՛ք
ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի , և գաղտնի որ
ոչ ծանիցի » : Գիտցէք , գուք , իմ ժրագօտի մը-
շակներ , Աւետարանի լուսոյն առաջ ամէն խա-
ւարին խորհուրդ և գործ մերկապարանոց կը
խայտառակին : Նոքա ՚ի բնէ անտի չարարմատոյ
շառաւիդ են . երբէք կարող չեն իրենց դառ-
նահամ պտուղ ծածկել ձեզմէ : Նոցա վարուց
անուղիղ ընթացքէն , նոցա օտար ուսումն քա-
րոզութենէն , նոցա մարդահանոյ խօսքերէն ան-
շուշտ պիտի ճանչնաք և յիշէք իմ բան , թէ
չառ ժառ՝ բարի պտուղ չի բերեր : Զի խարուիք
ուրեմն երբ նոքա Տիրոջ անունով գործել կ'ու-
զեն , ու ծառայական խոնարհ ձայնով՝ զիս , Տէր
Տէր , կը կանչեն : Մի՛ հաւատաք , դոցա ձայն
միայն երկու շրթանց մէջէն կը հնչի . սրտի կամ

սիրոյ մտերմական ճայն չէ : Օր մի պիտի գայ և այն օր՝ վերջին հանդերձեալ օրն է , ուր ահաւոր հրապարակին մէջ , երբ իրենց գաղտնիքներ կը յայտնուին՝ ես կը խօսիմ նոցա հետ . իրենք պատասխան պիտի տան ամօթապարտ դէմքով : « Տէ՛ր , քո անունով մարդարէացանք , քո անունով Աւետարանդ քարոզեցինք , քո անունով բազմապատիկ զօրութիւն ու հրաշքներ գործեցինք երկրի վրայ . մարդիկներ զմեզ քո Աւետարանին հաւատարիմ պաշտօնեայ ճանչան : Այս ինչ մեք ակնկալութիւն ունիմք վարձուց , զոր դու պատրաստեր ես քո սիրելեաց համար , եղուկ մեզ , սուրբերուդ հաղորդակցութենէն զրկելով՝ քո ատելեաց հետ կը դատապարտե՞ս զմեզ » : Այլ ես պիտի կշտամբեմ այդ ինքնընտիր սուտ առաքեալներ « ի բայ գնացէք , ո՞վ դուք անիրաւութեան մշակներ , դուք՝ որ իմ Աւետարանա իբրեւ շահավաճառութիւն քարոզեցիք . դուք՝ որ խորամանկ հին օձին պէս եկեղեցւոյ դրախտին մէջ մտնելով՝ Աստուծոյ հըրեցտակ ձեւացայք , եկեղեցւոյ միութիւն երկպատակեցիք . դուք իմ ցանած սիրոյ սերմերուն հետ՝ օտար որո՞մն խառնեցիք . դուք ճշմարտութեան աղբիւրն պղտորեցիք ժանտահոտ ջուրերով : Ի՞նչ որ գործեցիք դուք , Աստուծոյ փառք

չէր ձեր նպաստակ , այլ ձեր շահ և անձնական օգուտ : Ուստի ՚ի բաց գնացէք , դուք արժանի չէ՛ք ընդունել այն պսակ , զոր ես միայն հաւատարիմ ծառայից գլուխ կը դնեմ» :

ԴԱՍ ԽԳ.

ԱՄԵՆԱՅՆ ՈՐ ԼՍԵ ԶԲԱՆՍ ԻՄ ԶԱՅՍՈՍԻԿ . . .

Ցիսուս այն ինչ յաւիտենական կենաց խօսքեր կ'աւարտէ , իբրեւ վերջաբան իւր սքանչելի ճառին՝ կը յացտնէ նմանագոյն օրինակով մի , թէ՛ ո՞վ որ իմ այս պատուէրներս կը լսէ ու կը պահէ , նա կը նմանի այն խոհական մարդոյն , որ նախատես իմաստութեամբ իւր տան հիմն հաստատուն վիմին վրայ կը դնէ և նորա վրայ կը բարձրացնէ չէնք , զոր ոչ աշխարհիս տեղատարափ անձրեւ , և ոչ հեղեղաբեր գետեր և ոչ եւս գոթորկալից հողմեր կարող են կործանել զայն : Իսկ նա , որ իմ խօսքերս միայն կը լսէ ու չի առներ , կը նմանի այն յիմար մարդոյն , որ իւր տան հիմն սահուն աւազի վրայ կը դնէ երբ կիջնեն յորդահոս անձրեւներ , կը զայրանան գետերու ջրեր և միանգամայն կը փշեն սաստկաշունչ հողմեր , խկոյն զարնելով տան՝ վեր ՚ի վայր կը քանդեն , որուն կործանում մեծ

կը լինի . տեսնողներ կը զարմանան , չարախնդաց
մարդիկ վա՛շ վա՛շ կը կարդան :

Այս ճշգրիտ նմանութեան օրինակ՝ ո՛վ որ
Աւետարան կը կարդայ թող բարոռք ՚ի միտ առ-
նէ . միայն լսելով ու հաւատալով՝ Քրիստոնէու-
թեան չէնք կատարեալ չէ , այլ ոլէտք է Աւե-
տարանի սուրբ խօսքեր լսելին և հաւատալին
յետոյ՝ զայնս արդիւնաւորել նոյն պատուիրա-
նաց համեմատ գործքերով . ահա նա է մարդ-
արդար , օրինապահ և կատարեալ : Վասն զի
Քրիստոսի Առաքեալ բացարձակ կը խօսի , թէ
օրէնք լսող կամ գիտցող չի արդարանար , այլ
առնող : Առնելն է միայն , որ հաւատոյ չէնքին
հիմ՝ հաստատուն , անշարժ և անդրդուելի կը
պահէ աշխարհի գայթակղութեան դէմ , հալա-
ծանաց հեղեղներու դէմ , բռնակալաց բարկու-
թեան դէմ , խսւար իշխանին խորամաննկու-
թեան դէմ . մոնչող շրջող մեր սոսիս առիւծին
դէմ , նորա ամէն դարանագործ մեքենայից
դէմ , աշխարհի փառասիրութեան դէմ . մարմ-
նոյ հրապուրիչ ցանկութեան , բազմապատիկ ախ-
տերու կրից դէմ , աշխարհի տուած ամէն չա-
րեներուն դէմ : Մարդ կարող չէ մեռեալ հա-
ւատքով դիմագրաւ լինել աշխարհի զօրութեան
դէմ : Թէ կոռուիլ ու յաղթել կ'ուզես , զրահա-

ողք զքեկ կենդանի հաւատքով , այսինքն ար-
դիւնարար գործքով . ուու յայնժամ կը յաղթես՝
թէ և լիածով մեծութենէն ու միրելի զաւակ-
ներէն զրկուած՝ մենամարտ Յովի նահատակին
պէս անարգ աղբիւսի վրայ ձգուած՝ վշտահար
ցաւոցդ մէջ անօգնական մնաս : Այսքան և այս-
չափ են Յիսուսի քարոզած սիրոյ և բնական օ-
րինաց սքանչելի վարդապետութեան դասեր ,
զորս Գալլիեայի լեռան վրայ աւանդեց ժողովր-
դոց , որուն վրայ՝ կը զարմանային շատ . վասն զի
Յիսուս իշխանութեամբ կ'ուսուցանէր և ոչ թէ
դպրաց կամ փարիսեցւոց նման մարդահաճոյ
կեղծաւորութեամբ մարդկանց առաջ միշտ բա-
րեմարդիկ երեւելով փառք և գովութիւն որ-
սալ :

Աստուած օրէնսդիր՝ ինքնին աշխարհի մէջ
իբրեւ մարդոց հետ ընտանեբար մարդոց ց
լեզուով խօսեցաւ . իւր դասերու մէջ բնաւ երկ-
րաչափական խնդիրներ չիկան , բայց միանդա-
մայն խոր են և դիւրին , առ որ կը զարմանար
Դաւիթ . «Որպէս զի մեծ են գործք քո , Տէր , և
յոյժ խոր են խորհուրդք քո » : Միայն աշխար-
հիս անզգամներ ու անմիտներն են , որ փոխա-
նակ հաւատալու՝ Աստուծոյ անհաս խորհուրդ-
ներ՝ խելքով չափել կ'ուզեն : Աստուծոյ մանուկ՝

մեծագործութիւն մի գործեց տիեզերաց մէջ ,
աշխարհ զարմացաւ և դեռ կը զարմանայ : Յի-
սուսի բովանդակ վարդապետութեան նպատակն
ուրիշ բան չէր , այլ միայն մարդկային ամբար-
հաւաճ և բիրտ հոգին դաստիարակել և նոցա
թիւր գնացք ուղղել դէպ ՚ի երկինք՝ աշխարհիս
խոտորեալ ճանապարհն : Առանց Աւետարանին
առաջնորդութեան՝ ուղիղ ճանապարհ չիկայ , և
ոչ եւս առանց Փրիստոսին՝ այն առաւել և կա-
տարեալ կեանք , զոր ինքն միայն չնորհեց . «Ես
եկի , զի զկեանս ունիցիք , և առաւել եւս ու-
նիցիք : »



Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Ա. Ա Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ա

Որ զՄարդարիտս գնէք և ընթեռնուք , Ե-
կեղեցւոյ հաւատացեալ որդիքներ , անեղծ և
խորագոյն դրոշմեցէք ձեր սրտին ու հոգւոյն
մէջ Յիսուսի Աւետարանի վարդապետութեան և
իւր սիրոյ օրինաց կենդանի տառեր ու դասեր ,
զոր դարձեալ յաւարտ գործոյս կը կրկնեմ ձեզ
և չեմ դանդաղիր :

Սուրբն Պօղոս իւր մշտախօս քարոզութեան
խօսքեր յաճախ կը կրկնէր և դարձեալ կը կրկնէ ,
որպէս զի զՔրիստոս իւր խաչին ճառով ու պատ-
կերով նկարէր ու կենդանի պահէր հաւատա-
ցելոց սրտին մէջ . որով հանապազ յիշել կուտար
նա Խաչելցյն մէր , խաչին խորհուրդ և փըր-
կութիւն :

Իսկ մեզ , որ աշխարհի ծանր ծանր հոգերով
և չարաչար զբաղմունքներով ուշամոռաց եղեր
ենք , քանի առաւել պէտք է Աւետարանին կե-
նաց բանին տառերը և մեր երկնաւոր Վարդա-
պետին ճշմարտութեան դասերը բիւր անդամ

Խօսիլ, բիւր անդամ գրելու ու կրկնել, մինչեւ
անեղծապէս տպաւորի մեր սրտին ու խոր երի-
կամանց մէջ:

Երկնից Սերմանահան՝ միանդամ եկաւ այս
աշխարհ և իւր Աւետարանի սերմերը լիարուռն
ցանեց ու գնաց: Այլ աւա՛ղ, ոմանց սիրտ քար
դարձաւ, սերմերն ընդունելու համար հիւթ չու-
նեցաւ. ոմանց սիրտն ճանապարհ դարձաւ, ուր
սերմերն առանց ծլելու և բողբոջելու, ոտքի
տակ կոխան եղան, և կամ թռչուններ քաղե-
ցին. ոմանց սիրտ փշաբեր երկիր էր, և Յի-
սուսի սերմերը փշերով հեղձոյց. միայն սակաւ
մարդոց սիրտ իրեւ պարարտ ու պատրաստ
երկիր՝ մեծ իղձով ընդունեց Աւետարանին սեր-
մըն, և բազմապատիկ պաղաբերեց:

Ուրեմն, ո'վ դու մտադիւր ընթերցող, եթէ
ժառանգել կ'ուզես ինն Երանութեանց մեծու-
թիւնը, եթէ քեզ ըղձալի են ու չես ճանձրա-
նար՝ հազար անդամ լսել Աւետարանի քաղցր
պատուիրանաց ձայներ, բա՛ց ապա քո սիրտ և
միտք, ուշ դիր ինձ, և ես կրկին յիշեմ քեզ
մի մի Յիսուս վարդապետին կենդանարար դա-
սերը, որոց բովանդակութիւնն այս է:

Հոգւով աղքատ լինել, չբարձրամտիլ, թէեւ
աշխարհիս վերաց ճոխութեամբ իշխանութեամբ

բարձրանաս. հեզ ու խոնարհ լինել բարկութեան
դէմ. ինչպէս Յակոբ Եսուսին առաջ. և մոլի կը-
րից ու ցասման կրակը կրկին եւս չբորբոքել
այլ հեղութեան ջրով շիջուցանել: Աստուծոյ
արդարութեան և կենաց աղբիւրին միշտ ծա-
րաւի լինել. սուրբ սիրտ ունենալ՝ զԱստուծ
տեսնելու համար. խաղաղարար հոգւով վարիլ՝
Աստուծոյ որդի կոչուելու համար. հանել սրտէն
խոռվարաբին ոգին և Քրիստոսի հոգին ընդու-
նել: Համբերել, տանիլ ամէն հալածանաց ու
նախատանաց՝ Յիսուսի անուան և նորա սիրոյն
համար:

Իբրեւ համեմիչ աղ՝ Աւետարանին քարոզու-
թեամբ համ տալ անհամացեալ ժողովրդոց. իբ-
րեւ լսյ՝ լսյ տալ նոցա որք անաստուած գի-
տութեան և մեզաց խաւարին մէջ կը նստին:
Առաւել բարի գործով, կենդանի օրինակով,
բարի օրինակ տալ մարդկանց, քան թէ լոկ քա-
րոզութեամբ. որպէս զի նոյն իսկ անհաւատներ
տեսնան, ու հաւատացելոց հետ փառաւորեն
զնայրն որ յերկինսն է: Ի զուր և տարապար-
տուց եղբօր դէմ չբարկանալ և նմանակից եղ-
բայր մորոս չախուանել: Առանց եղբօր հետ
հաշտուելու՝ սեղանին վերայ պատարագ չի հա-
նել. դեռ դատաւորին դիմաց չելած՝ ոսովախն

հետ իրաւախոհ լինել: Ամենեւին չերդնուուլ, ոչ
յերկին՝ որ Աստուծոյ ահեղ աթոռն է, և ոչ
յերկիր՝ որ Նորա ոտից պատուանդան է. այլ
անկեղծ օրափ ուղղութեամբ այո՛ն այո՛ ասել և
ո՛չ՝ ո՛չ: Զարին հակառակ կենալով՝ նորա զայ-
րոյթին՝ այլ եւս պատճառ չի տալ: Շապիկ հա-
նողին բաձկոնն եւս թողուլ: Ով որ ինչ կինդրէ՝
տալ, անխտրապէս կարեկցիլ. Երիքովի ճամբուն
վերայ լինկած դժբախտին համար չհարցնել թէ
Երուսաղէմացի՞ իցէ կամ Սամարացի: Ով, քանի՞
քաղցր սիրտ ունի մեր օրէնսդիր Յիսուս. կու-
սուցանէ թշնամին սիրել, ատելոյն բարի առ-
նել, և սրափ մտօք աղօթել նոյա համար, որ
կը լիկեն ու կը հալածեն զմեզ:

Միայն սիրելին ըս սիրել, զի այդ չնորհ մի
չէ, կ'ասէ. միայն բարեկամաց ողջոյն չիտալ,
առանց բնաւ խտրելոյ՝ մարդասէր լինել: Ողոր-
մութիւն, պահք և աղօթք միայն արտաքին
ձեւերով առանց սրոփ սրբութեան և զգացման
չմատուցանել. կեղծաւոր փարիսեցւոյն պէս Աս-
տուծոյ սեղանին առաջ չկեղծաւորիլ առ ՚ի ցոյց,
և մարդիկներէն փառաւորուելու համար. հրա-
պարակաց անկիւներում չմիմնջել և հեթանոսի
նման շատախօս ըս լինել: Միայն Աստուծոյ ար-
քայութիւն և նորա սուրբ կամք և անունը

խնդրել և մեր պարտեաց թողութիւն, և այ-
նու պայմանաւ միայն՝ երբ մեք եւս մեր պար-
տական ընկերին թողումք ՚ի սրտէ:

Այս աշխարհիս վերայ, Աւետարանի ազա-
տութեան զինուորելին յետոյ՝ երկու տերանց
չծառայել, այսինքն Աստուծոյ և միանգամայն
Մամոնայի: Երկնից Հօր հաւատալին յետոյ՝ կե-
րակուրի և հանդերձի համար երեք չի հոգալ.
օդային թուչուններ և գաշտի ծաղկիներն օրի-
նակ առնելով՝ բնաւ չերկմտիլ Նախախնամու-
թեան դէմ. հեթանոսներուն թողուլ միայն չա-
փազանց հոգն, և վաղուան համար իսկ չհոգալ:
Եղբայր ու զընկեր չդատել չարաչար, թողով,
իւր աշքին մեծ գերան և եղբօր աշքին աննըշ-
մարելի շիւղ հանելով. այսինքն նախ զինքն սրբ-
րել արատէն և ապա զեղբայրն: Աւետարանի
սրբութիւնը չտալ նոցա, որ քան զըտն միր-
հաչող անզգամ են, և ոչ եւս Աւետարանի ան-
գին մարգարիտն անարժան խոզերուն առաջ
ձգել:

Աներկբայ հաւատով խնդրել, հայցելու բաղ-
յել, անշուշտ կը բացուի դուռն և կը տրուի
նոցա պէտքն ու կարիք. միայն թէ հացին տեղ՝
քար չի խնդրեն և կամ ձուկին տեղ օծ: Նեղ
դոնէն մտնել, Գողգոթայի անձուկ ու վշտ ճա-
գանէն մտնել, Գողգոթայի անձուկ ու վշտ

նապարհէն երթալ որ ուղիղ դէպ ՚ի երկինք կը
տանի . խոյս տալ ու փախչիլ աշխարհիս այն
փափուկ և ծաղկազարդ ճանապարհէն , որ ՚ի
կորուստ կ'առաջնորդէ : Յիսուսի աւանդած սի-
րոյ կտակ և մարդկային ընկերական ու բնական
օրէնքը հաստատուն պահել . ամենելին չառնել
ընկերին , ինչ որ իւր անձին՝ չար կը համարի :

Սուտ մարդարէից և կեղծաւոր քարոզիչնե-
րէն զգուշանալ միշտ . առանց ճշմարիտ արդա-
րագործութեան՝ լոկ շրթունքներով Տէ՛ր , Տէ՛ր ,
չկանչէլ : Աշխարհիս յիմարներուն պէս՝ աւազին
վերայ խախուտ հիմն չդնել և չէնք շինել , այլ
իրրեւ խոհական , իմաստուն մարդ՝ ճշմարիտ կը-
րօնի բարոյական հիմն՝ խոր և հաստատուն վիմի
վերայ դնել . այսինքն լսելով հաւատալ Աւետա-
րանին և Աստուծոյ Որդւոյն , և հաւատալով
գործել զարդարութիւն :

Տէ՛ր , ո՛վ կարող է առանց քո ճեռնտու օ-
ժանդակութեան՝ քո պատուիրած արդարու-
թիւններ անթերի կատարել : Տէ՛ր , դու ինքնին
եկար տեսար իսկ մարդկացին ապիկարութեան
վիճակ ու խօսեցար , « Առանց իմ ոչ ինչ կարէք
առնել » : Ուրեմն Դաւթին պէս ժտելով՝ քո լոյս
և օգնութիւն կը խնդրենք .

Իմաստուն արա զիս , Տէ՛ր . . . և առաջնորդ
եղիր ինձ քո պատուիրանաց անխոտոր շաւիդ-
ներու մէջ , որոց միայն հաճեցաւ միտքս ու հո-
գիս : Տէ՛ր , քո սիրովդ աչքերս դարձուր դէպ
՚ի երկինք որպէս զի չի տեսնամ աշխարհիս հրա-
պուրիչ նանրութիւններ , որ կը հանեն զիս քո
սուրբ ճանապարհէն : Ահա ցանկացայ , սիրեցի
ու գրեցի Աւետարանիդ պատուիրանաց խօս-
քեր : Ես որ տրուալ պաշտօնեայ եմ Աւետարա-
նիդ քարոզութեան , այս գուղնաքեայ վաստակ
իրբեւ ՚ի քէն նուէր և չնորհ՝ եկեղեցւոյդ որդ-
ւոց կ'ընծայեմ :



ՑԱՆԿ

ԵՐԵՄ

7

ՆԱԽԱՇԱԽԻԴ,

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. Մատթէոսի	
Ե. Զ. Է. Գլուց	17-26
ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ. Մովսէս և Յիսուս.	30
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատթէոսի Ե. Գլուցն մէրայ.	

ԴԱՍ


Ա. Երանի աղքատաց հոգւով	34
Բ. Երանի սգաւորաց	36
Գ. Երանի հեղոց	37
Դ. Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան	38
Ե. Երանի ողորմածաց	39
Զ. Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք	41
Է. Երանի խաղաղարարաց	42
Ը. Երանի որ հալածեալ իցեն վասն ար- դարութեան	44
Թ. Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ	45
Ժ. Դուք էք աղ երկրի	46
Ժ. Դուք էք լոյս աշխարհի	47

ԵՐԵՍ

ԺԲ.	Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարդարէս	49
ԺԳ.	Որ բարկանայ եղբօր իւրում տարա- պարտուց	51
ԺԴ.	Թող զՊատարագն ի վերայ սեղանոյն	52
ԺԵ.	Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում .	53
ԺԶ.	Որ հայի իկին մարդ առ ի ցանկանալոյ	54
ԺԷ.	Եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ	55
ԺԸ.	Որ արձակիցէ զկին իւր	57
ԺԹ.	Այլ եղիցի ձեր բան, այսն՝ այս և ոչն՝ ոչ	58
Ի.	Մի կալ հակառակ չարին	60
ԻԱ.	Զգոյշ լերուք ողորմութեան ձերում	65
ԻԲ.	Եւ յորժամ կայցէք յաղօթս	66
ԻԳ.	Մի շատախօս լինիք	68
ԻԴ.	Հայր մեր որ յերկինս ես	69
ԻԵ.	Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր	71
ԻԶ.	Թող մեզ զպարտիս մեր	72
ԻԷ.	Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն	73
ԻԸ.	Եթէ թողուցուք մարդկան զյանցանս	74
ԻԹ.	Եւ յորժամ պահիցէք	76
Լ.	Մի գանձէք ձեզ գանձս յերկրի	78
ԼԱ.	Ճրագ մարմնոյ ակն է	81

ԼԲ.	Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել	83
ԼԳ.	Մի հոգայք վասն ոգւոց ձերոց	85
ԼԴ.	Հայեցարուք ի շուշանն վայրենի	86
ԼԵ.	Մի հոգայք վասն վազուին	88
ԼԶ.	Մի դատիք զի մի դատիցիք	91
ԼԷ.	Զի՞ տեսանես զշիղյական եղբօր քո	92
ԼԸ.	Մի տայք զորբութիւն շանց	95
ԼԹ.	Խնդրեցէք նախ զարքայութիւն Աս- տուծոյ	99
Խ.	Զամենայն զոր միանգամ կալիցիք թէ արասցեն ձեզ մարդիկ	100
ԽԱ.	Նեղէ դուռն և անձուկ ձանապարհն	103
ԽԲ.	Զգոյշ լերուք ի սուտ մարդարէից	108
ԽԳ.	Ամենայն որ լոէ զբանս իմ զայսոսիկ	111





ՀՀ Ազգային գրադարան



NL0249545

